



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Վաղարշապատեն Դեպի

Խորհրդարանական Ընտրություններ

Յառաջիկայ ամիսներում Հայաստանի ներքաղաքական կեանքի ուշադրությունը պիտի մնայ կեդրոնացած ՅուՆԻՍԻՄ Նախատեսուած Խորհրդարանական ընտրություններում վրայ: Վաղարշապատ համայքէն ներս, որում մէջ կ'իմայ նաեւ Էջմիածին քաղաքը, տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրությունները վերջինն էին՝ համապետական ընտրություններէն առաջ եւ այդ պատճառաւ իսկ ստացած էին մեծ կարեւորութիւնը եւ իշխանական կողմին եւ արմատական ընդդիմութեան համար:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը կ'ուզէր ցոյց տալ, որ ինք կը շարունակէ մնալ ամենէն մեծ քաղաքական ուժը երկրէն ներս եւ իր տկարացման շուրջ տարածուող քարոզչութիւնը չի համապատասխանէր իրականութեան: Ատրպէյճանի հետ խաղաղութեան հաստատման գծով տեղի ունեցող վերջին գործընթացներում լոյսին տակ իշխող ուժը ներկայիս կը թուի աւելի ինքնավստահ ըլլալ իր ընտրական կարողութիւններում մասին ու Վաղարշապատի մէջ իր արձանագրած յաղթանակը կը նկատէ նախերգանք՝ գալիք Խորհրդարանական ընտրություններում:

Միւս կողմէ, ընդդիմութիւնը կը փորձէր Վաղարշապատի մէջ կրկնել Կիւմրիի պատկերը, երբ մի քանի տարբեր անուններով հանդէս եկող եւ իրար հակադիր ներկայացող խմբակները ընտրություններէն ետք միաւորուելով կարողացան Քաղաքացիական Պայմանագիրը դուրս ձգել քաղաքային իշխանութենէն: Անոնք նոյնը փորձեցին ընել այս անգամ եւս, սակայն չկարողացան հասնիլ ակնկալուած արդիւնքին:

Վերջին տարիներում տեղի ունեցող տեղական մարմիններում ընտրություններում, ինչպէս Երեւանի, Կիւմրիի եւ վերջերս ալ Վաղարշապատի մէջ ընդդիմադիր երկու գլխաւոր ուժերը՝ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի կողմնակիցները նախընտրեցին ներկայացաւ տարբեր անուններում տակ գիտակցելով, որ այդ երկու կերպարները կը շարունակեն մնալ «թուճաւոր» ու ընտրող հասարակութեան մօտ կը ստեղծեն ժխտական տրամադրութիւններ: Քոչարեանականները ներկայացած էին «Յաղթանակ» դաշինքի անուան

Շար.ը էջ 2

Հայ-Ամերիկեան Աշխատանքային Խումբերը Սկսած Են Աշխատիլ՝ Ուաշինկթընեան Համաձայնագրերու Իրագործման Ուղղութեամբ

Հայ-ամերիկեան աշխատանքային խումբերը սկսած են աշխատիլ՝ ուաշինկթընեան համաձայնագրերու իրագործման ու «Թրամփի ուղիի» զարգացման համար: Այդ մասին յայտնի կը դառնայ ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ Էլիսըն Հուքըրի եւ վարչապետ Փաշինեանի հանդիպման մասին կառավարութեան տարածած հաղորդագրութենէն:

Ամերիկեան կողմէ աշխատանքային խումբը պիտի գլխաւորէ պետական քարտուղարի տեղակալի օգնական Սոնաթա Քալթերը, որ կը վերահսկէ Ռուսաստանի եւ Կեդրոնական Եւրոպայի քաղաքականութիւնը:

Աւելի վաղ Քալթեր զբաղեցուցած է Ռուսաստանի մէջ ԱՄՆ դեսպանատան քաղաքական հարցերով խորհրդականի տեղակալի պաշտօնը:

Պետական Քարտուղարութենէն Հոկտեմբերին յայտնած էին, որ ԱՄՆ կառավարութիւնը կը նախատեսէ մինչեւ այս տարուայ վերջ առաջին աշխատանքային խումբերը ստեղծել Ատրպէյճանի եւ Հայաստանի հետ: Յայտնի է, թէ արդեօք ստեղծուած է նաեւ ամե-



ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ Էլիսըն Հուքըր եւ վարչապետ Փաշինեան հանդիպումը

րիկա-ատրպէյճանական աշխատանքային խումբը:

Էլիսըն Հուքըր Նիկոլ Փաշինեանի հետ զրոյցին շեշտած է, որ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի միջեւ շարունակական համագործակցութիւնը, զուգորդուած Հայաստանի եւ Ատրպէյճանի մի-

ջեւ լիարժէք խաղաղութեան համաձայնագրի եւ թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ յառաջընթացի հետ, կը խոստանայ բանալ Հարաւային Կովկասը՝ որպէս կենսական

Շար.ը էջ 6

Արարատ Միրզոյեան Եւ Մակտալենա Կրոնօ Քննարկած Են ՀՀ-ԵՄ Գործընկերութեան Օրակարգի Հարցեր



Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան կ'ընդունի ԵՄ յատուկ ներկայացուցիչ Մակտալենա Կրոնոյին

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան հանդիպում ունեցած է Հարաւային Կովկասի եւ Վրաստանի մէջ ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Մակտալենա Կրոնոյի հետ:

Զրուցակիցները քննարկած են ՀՀ-ԵՄ գործընկերութեան օրակարգի հարցեր: Ընդգծած է, որ

մինչեւ օրս տարբեր ուղղութիւններով արձանագրուած կարեւոր ձեռքբերումները կ'արտացոլեն գործընկերութեան զարգացման յարաշարժութիւնը, խորութիւնն ու բովանդակային յագեցուածութիւնը: Անդրադարձ կատարուած է յառաջիկայ ծրագրերուն եւ

Շար.ը էջ 6

ՀԾԿՅ-ն Որոշեց Դադրեցնել ՀԵՑ-ի Բաշխման Արտօճագիրը



Հայաստանի Հանրային Ծառայութիւնները կարգաւորող Յանձնաժողովը դադրեցուց «Հայաստանի Ելեկտրական Ցանցեր» ընկերութեան՝ Ելեկտրականութեան բաշխման արտօճագիրը:

ՀԾԿՅ -ն այսօր վերսկսած էր Նոյեմբեր 13-ին մեկնարկած ՀԵՑ-ի՝ Ելեկտրականութեան բաշխման արտօճագիրը դադրեցնելու հարցի քննարկումը:

Նշենք, որ «Հայաստանի Ելեկտրական Ցանցեր»-ու ժամա-

Շար.ը էջ 6

10 Սգկիթ Էրտողանի Խնդրանքով. Հերթական Սուտ Լուրը Հայաստանի Դէմ

ԱՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հայկական մի շարք լրատուամիջոցներ Նոյեմբերի 14-ին տարածել են տեղեկութիւն, թէ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրտողանի խնդրանքով կարգադրել է Հայաստանում կառուցել 10 մզկիթ:

Լրատուականները որպէս տեղեկութեան աղբիւր նշել են Թուրքական odatv.com կայքը:


«Ըստ հրապարակման՝ նոր մզկիթները շինարարութիւնը Հայաստանում նախատեսւում է սկսել Դեկտեմբերի սկզբին: Հաղորդւում է, որ մզկիթներից հինգը կը կառուցուեն հայ-թուրքական սահմանին մօտ գտնուող տարածքներում, իսկ մնացած հինգը՝ երկրի խոշոր քաղաքներում»,- գրել է հայկական 168.am-ը՝ մէջբերելով, թէ Փաշինեանն աջակցել է այս նախաձեռնութեանը՝ ապահովելով պատմական նախագծի ֆինանսավարկումը կրթութեան, գիտութեան, մշակութի եւ սպորտի նախարարութեան միջոցով:

Տեղեկութիւնը տարածել են նաեւ pastinfo.am-ը, yerkir.am-ը, ինչպէս նաեւ ֆէյսպուքեան մի շարք էջեր (1, 2) եւ տելեգրամեան ալիքներ:

Տեղեկութիւնը չի համապատասխանում իրականութեանը

Վարչապետի մամուլի խօսնակ Նազելի Բաղդասարեանը ֆէյսպուքեան իր էջում հերքել է տեղեկութիւնը. «OdaTV-ի կայքը կրկին շրջանառութեան մէջ է դրել կեղծ տեղեկատուութիւն, իսկ մի շարք հայաստանեան ԶԼՄ-ներ՝ առանց նուազագոյն ստուգման կամ աղբիւրների ճշգրտման, կտալել են արտատպել այս ֆէյքը՝ անկախ մտադրութիւնից ակամայ դառնալով ապատեղեկատուութեան շղթայի մասնակից»:

Յատկանշական է, որ յօդուածում նշուում է, թէ մզկիթների շինարարութիւնը «սկսուելու է Դեկտեմբերից», սակայն դա անհամատեղելի է իրաւական եւ փաստական գործընթացների հետ. Հայաստանի կառավարութիւնը նման որոշում կամ նախագիծ չի ընդունել, իսկ շինարարական աշխատանքներ



ընդէն կարող մեկնարկել առանց պարտադիր նախնական քայլերի՝ մրցոյթի յայտարարման, կառուցման նախագծի հաստատման, հողի յատկացման, ինչպէս նաեւ ֆինանսավորման աղբիւրի սահմանման: Այս ընթացակարգերից ոչ մէկը տեղի չի ունեցել, ինչը փաստում է, որ տեղեկութիւնները հաւաստի չեն:

Odatv-ն՝ հիբրիդային պատերազմի գործիք

Առաջին անգամ չէ, որ odatv.com-ում Հայաստանի ու մասնաւորապէս կառավարութեան վերաբերեալ ապատեղեկատուութիւն է տարածւում: Ուղիղ մէկ ամիս առաջ՝ Հոկտեմբերի 15-ին, նոյն հեղինակը մէկ այլ սենսացիոն յօդուած էր գրել, թէ Նիկոլ Փաշինեանը «յայտարարել է Սիւնիքի մի մասը Ատրպէյճանին փոխանցելու մասին» եւ պնդել է, թէ Հայաստանը Սիւնիքից «կը յանձնի 1200 քմ տարածք»:

Fir.am-ի մեր գործընկերներն անդարարաբարձել էին այս ապատեղեկատուութեանը:

Հայաստանում կառուցուող 10 մզկիթների մասին նոր յօդուածը Odatv-ի կայքում հրապարակուել է Նոյեմբերի 14-ին: Նիւթի հրապարակումից յետոյ տեղեկատուական մեծ արշաւ է սկսուել X-ում (նախկին՝ Twitter): Նախ Odatv-ի X-ի իր միկրոբլոգում Թուրքերէն տեսանիւթ է հրապարակուել՝ յօդուածի նոյն բովանդակութեամբ:

Այնուհետեւ այս կեղծ տեղեկութիւնն արդէն անգլերէն տեսանիւթերի եւ տեքստերի միջոցով

տարածել են տասնեակ անանուն ու ֆէյք X օգտահաշիւներ: Այս սխեման առաջին անգամ չի օգտագործուում:

Յօդուածին արդէն իսկ անդրադարձել է ռուսական Gnida Project հետազոտական նախաձեռնութիւնը, որը զբաղւում է ռուսաստանեան ապատեղեկատուական արշաւների բացայայտմամբ: Նախաձեռնութիւնը գրել է. «Վերջին Storm-1516 ապատեղեկատուական արշաւը Թիրախաւորում է Հայաստանը եւ նրա վարչապետ Նիկոլ Փաշինեանին»:

Ի՞նչ է Storm-1516-ը

Storm-1516 ապատեղեկատուական արշաւը ռուսական ծագում ունեցող համակարգուած ցանց է, որը կիրառում է հիբրիդային պատերազմի միջոցներ՝ արհեստական բանականութեամբ ստեղծուած բովանդակութիւն, կեղծ լրատուական կայքեր, բազմալեզու deepfake-եր եւ ժամանակաւոր հաշիւներ: Դրա նպատակը ոչ միայն կեղծ տեղեկատուութիւն տարածելն է, այլեւ վստահութեան քայքայումը, իրականութեան աղաւաղումը եւ հասարակութիւնների տեղեկատուական ընկալման խաթարում: Թիրախում են Եւրոպական երկրները, Ուրբանիան եւ այլ երկրներ:

Վերջին ամիսներին այս արշաւի Թիրախաւորում է նաեւ Հայաստանը՝ յատկապէս իշխանութիւնները եւ ՀՀ-Եւրոպական Միութիւն համագործակցութիւնը:

«Սիվիլնեթ» եւ գործընկեր փաստեր ստուգող կազմակերպութիւնները բազմիցս անդրադարձել

են Storm-1516-ի շրջանակում տարածուած կեղծ լուրերին:

Կեղծ լուրեր՝ նորաստեղծ կայքից. ինչպէս է տարածուել Փաշինեանի եւ Պապիկեանի մասին ապատեղեկատուութիւնը

Թուրքական Odatv-ն բազմիցս օգտագործուել է այս հիբրիդային արշաւների մէջ՝ այդ թւում Ուրբանիայի դէմ ուղղուած ապատեղեկատուութիւն տարածելու համար:

Գործելաոճը գրեթէ միշտ նոյնն է. նախ որեւէ նոր կամ արդէն գործող կայքով յօդուած է հրապարակում՝ կեղծ, սկանդալային տեղեկութիւններով: Յետոյ այդ յօդուածի հիման վրայ տեսանիւթեր են ստեղծուում ու տարածուում յատկապէս X միկրոբլոգում: Տարածողները սովորաբար նորաստեղծ, անանուն կամ ֆէյք հաշիւներ են, որոնք միաժամանակ հրապարակում են նոյն բովանդակութեամբ գրառումները՝ ստեղծելով լայն տարածման ու «Հանրային քննարկման» պատրանք: Շատ դէպքերում այս շղթային միանում են նաեւ Telegram ալիքներ, որոնք ուժեղացնում են նոյն ապատեղեկատուութիւնը տարբեր լեզուներով:

Հէնց այս սխեմայով է տարածուել նաեւ Հայաստանում 10 մզկիթների կառուցման վերաբերեալ Odatv-ի հրապարակումը. սակայն այս անգամ արշաւին, փաստացի, միացել են նաեւ Հայաստանեան մի շարք լրատուամիջոցներ: «ՍԻՎԻԼՆԵԹ»

ՄԱՄԱԽԱ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$150.00 (First Class)
Canada \$ 250.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ցին մէջ: Ընդդիմութիւնը իր կողքին ունի նաեւ ապատեղեկատուութիւն տարածելու իր մեքենաները, որոնք կը ղեկավարուին ներքին ու արտաքին խաղացողներու կողմէ՝ ազդելու համար հասարակական կարծիքին վրայ:

Այս բազմակողմանի գործին ինչպէս պիտի կարողանայ դիմադրել իշխող ուժը, կը մնայ հարցական: Վարչապատի արդիւնքներով խանդավառուիլու չափազանցուած ինքնավստահութիւնը խորհրդարանական ընտրութիւններուն յաղթանակ ապահովելու երաշխիք չեն կրնար ըլլալ: Յաջողութեան հասնելու համար իշխանութիւնները պէտք ունին ընդլայնելու իրենց համակրողներու ցանցը, հոն ընդգրկելով Հայաստանի ապագայով մտաւոր ու սարակութեան բոլոր շերտերուն ու խմբաւորումները:

**ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»**

Վաղարշապատէն Դէպի Խորհրդարանական Ընտրութիւններ

Շարունակուած էջ 1-էն

տակ եւ օգտագործելով տեղական խնդիրները նաեւ ընտանեկան ու ազգականական կապերը կարողացան ապահովել 10 հազարէ աւելի ձայն: Անոնք իրենց կողքին նաեւ ունէին Մայր Աթոռի աջակցութիւնը, սակայն հակառակ այդ բոլորին չկարողացան յաղթել իշխող ուժին:

Խորհրդարանական ընտրութիւններու ներուժը ամբողջութեամբ տարբեր պիտի ըլլայ: Հոն պայքարը պիտի ընթանայ քաղաքական տեսակետներու ու դիրքորոշումներու շուրջ: Ժողովուրդը ընտրութիւն պիտի կատար խաղաղութեան ու պատերազմի միջեւ, Ռուսական եւ Եւրոպական կողմնորոշման միջեւ, Ժողովրդավարութեան ու ազատու-

թիւններու սահմանափակման միջեւ, տնտեսական ազատ նախաձեռնութիւններուն ու մենաշնորհներուն միջեւ: Երրորդ ուժի բացակայութեան պայմաններուն տակ, Հայաստանի քաղաքացիները ստիպուած պիտի ըլլան ընտրութիւն կատարելու նախկիններուն ու ներկաներուն միջեւ: Հոս առաւելութիւնը վարչապետ Փաշինեանի գլխաւորած ուժին կողմն է:

Ընդդիմադրութեան շարքը հաւանաբար համալրուի նաեւ Ռուսաստանաբնակ մեծահարուստ Սամուէլ Կարապետեանի ստեղծած «Մեր Զեւով» շարժումով: Անոնք միասնաբար տիրապետելով նիւթական հսկայ միջոցներու պիտի փորձեն օգտագործել դժգոհներու ձայները ու ներգրաւել զանոնք ընտրական գործընթա-

ԼՈՒՐԵՐ

Վաղարշապատի Ընտրութիւններուն Յաղթեց «Քաղաքացիական Պայմանագիրը»



Տեսարան մը Վաղարշապատի մէջ կայացած ընտրութիւններու գործընթացէն

Նոյեմբեր 16-ին Վաղարշապատի տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն արդիւնքներով՝ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան թեկնածու Արգիշտի Մեխակեանը ստացած 15,298 ձայնով պիտի դառնայ համայնքի ղեկավար:

Ընդգրկուած չկրցաւ կրկնել Կիւմրիի բեմագիրը: ՔՊ-ն միանձնեայ պիտի առնէ իշխանութիւնը Վաղարշապատի մէջ:

Արգիշտի Մեխակեանը շնորհակալութիւն յայտնեց խմբակիցներուն, իրենց քուէ տուողներուն:

Վաղարշապատի ընտրութիւններուն քաղաքական ուժերը մօտեցած էին որպէս 2026-ի խորհրդարանական ընտրութիւններու նախերգանք: Սա նկատեց նաեւ Արաքիկ Յարութիւնեանը՝ արձանագրելով ընդգրկուած ջանքերի պարտութիւնը:

Վարչապետը շնորհաւորած է Մեխակեանը յաղթանակի առնչու-

թեամբ:

Առաւօտեան Նիկոլ Փաշինեան նաեւ ֆէյսպուքեան իր էջով անդրադարձաւ Վաղարշապատի ընտրութիւններուն իր խումբի տարած յաղթանակին՝ նախ շնորհաւորելով բոլոր վաղարշապատցիները ժողովրդավարական ընտրութիւններու առիթով: Ապա վարչապետը քանի մը արձանագրում ըրած է եւ ներողութիւն խնդրած այն բոլոր սխալներուն համար, որ ՔՊ-ն թոյլ տուած է Վաղարշապատի մէջ:

Հրապարակուած արդիւնքներով՝ Կիրակի օր տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւններուն յաղթած է «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը 15,298 ձայնով: «Յաղթանակ» կուսակցութիւններու դաշինքը ստացած է 10,051 ձայն, «Համահայկական ճակատը»՝ 295, «Հանրապետութիւնը»՝ 1,241, «Մայր Հայաստանը»՝ 1,692, «Ազատ դեմոկրատները»՝ 1,177, «Ժառանգութիւնը»՝ 440, «Հայրենիք» կուսակցութիւնը՝ 1,193 ձայն:

Կոստանեան Ը Յարութիւնեանը Դեռ Կը Գործով Մարտ 1-ի Գործով

Մարտ 1-ի գործով նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը եւ Մարտ 1-ի գործով քննչական խումբի նախկին ղեկավար Վահագն Յարութիւնեանը կը գտնուին հետախուզման մէջ. խորհրդարանին մէջ այս գործով հանրային լուսնբերութեան յայտնեց Հակափտածութեան Կոմիտէի նախագահ Արթուր Նահապետեան:

Ըստ Արթուր Նահապետեանի, Վահագն Յարութիւնեանը ներգրաւուած է որպէս մեղադրեալ, այն բանին համար, որ որպէս քննչական խումբի ղեկավար կազմակերպած է քննիչներու եւ ոստիկանութեան ծառայողներու կողմէ ղէպքի վալրի գննութեամբ յայտնաբերուած եւ փորձագէտներուն ներկայացուած տարբեր տրամաչափի պարկուճները փոխելու գործընթացը: Ինչպէս նաեւ, ըստ մեղադրանքին, Յարութիւնեան խեղաթիւրած է գինուած ուժերու մասնակցութիւնը Մարտ 1-ի իրադարձութիւններուն, այդ կերպ օժանդակելով Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանին մէջ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Գէորգ Կոստանեանի կողմէ առանձնապէս ծանր յանցագործութիւնը թաքցնելու եւ պաշտօնական կեղծիքներ կատարելուն:

«Հետք»ը գրած էր, որ



Հակափտածութեան Կոմիտէի նախագահ Արթուր Նահապետեան

իրաւապահներու կողմէ 2019-էն հետախուզուող նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը Ռուսաստանի քաղաքացի դարձած է եւ 2022-ի Յունուարէն հաշուառուած է Մոսկուայի մէջ:

Մարտ 1-ի գործով քրէական վարոյթի նիւթերը բաղկացած են 600 հատորէ: Յանձնարարուած է համատեղ քննչական խումբի, որու կազմին մէջ ընդգրկուած են Հակափտածութեան Կոմիտէի եւ Քննչական Կոմիտէի 24 քննիչներ: Քրէական վարոյթով նախաքննութիւնը կը շարունակուի:

Ալէն Սիմոնեան Ընդդիմադիր Լրատուամիջոցներուն Կ'առաջարկէ Իր Գետ Բաց, Զխմբագրուած Գարցագրոյց

Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան յայտնա է իր պատրաստակամութիւնը մասնակցելու բաց, չմոնթաժուած հարցազրոյցի ընդդիմադիր լրատուամիջոցներու խմբագիրներու կամ անոնց կողմէ ընտրուած ներկայացուցիչներու հետ: Այս մասին ան յայտնած է Թեւեկրամով հրապարակուած տեսանիւթի մէջ:

Սիմոնեան նշած է, որ վերջին օրերուն աշխոյժ քննարկումներու, մեղադրանքներու եւ քաղաքական մեկնաբանութիւններու լոյսին տակ ինք պատրաստ է պատասխանելու ընդդիմադիր լրատուամիջոցներու հարցումներուն՝ իրենց ընտրած հարթակով:

«Առաջարկում եմ, որ ամենակարկառուն քաղաքական մեկնաբանները, խմբագիրները, որոնք այս օրերին տարբեր մեղադրանքներ են հնչեցնում, հանդիպեն ինձ հետ: Ես պատրաստ եմ հարցազրոյց տալ բոլոր այն ընդդիմադիր լրատուականների խմբագիրներին կամ նրանց ներկայացուցչին՝ իրենց տաղաւարում, իրենց տարածքում, իրենց նախընտրած հարթակում», - ըսած է Սիմոնեան:

Աժ նախագահին խօսքով՝ ինք որեւէ պայման չի դնէր, որպէսզի ընդդիմադիր լրատուամիջոցները հնարաւորութիւն չունենան պատճառաբանելու, թէ հարցազրոյց կազմակերպելէ խուսափած են պայմաններու պատճառով:

Աժ նախագահը նշած է շարք մը լրատուամիջոցներու ղեկավարներու անուններ, որոնց կ'առաջարկէ ընդունիլ մարտահրաւէրը. «Առաւօտ» թերթի գլխաւոր խմբագիր Արամ Աբրահամեան, Լրագրողներու միութեան նախագահ Սաթիկ Սէյրանեան, «Հրապարակ» օրաթերթի խմբագիր Արմինէ



Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

Օհանեան, «Yerevan Today»-ի ներկայացուցիչ, «5-րդ պլիքի» կողմէ ընտրուած անձ:

Սիմոնեան ընդգծած է, որ հարցազրոյցը պէտք է ըլլայ չմոնթաժուած, իրարու նկատմամբ յարգալից միջոցաւորութիւնով:

«Խնդրում եմ կապ հաստատել իմ խօսնակի հետ եւ կազմակերպել հարցազրոյցը: Այն պէտք է լինի մէկս միւսին յարգելու տրամաբանութեամբ՝ հարցերի եւ պատասխանների բացայայտման համար», - նշած է ան:

Աժ նախագահը յաւելած է, որ իր առաջարկը կը կատարուի համապետական ընտրութիւններէն քանի մը ամիս առաջ եւ յոյս յայտնած է, որ ընդդիմադիր լրատուամիջոցները չեն խուսափիր հանդիպումէն:

«Կը սպասեմ իմ կողմից նետուած ձեռնոցին ձեր պատասխանին, յուսամ՝ չէք խուսափի», - եզրափակած է Սիմոնեան:

«Յաղթանակ» Դաշինքի Գինգ Անդամի Մեղադրանք Առաջադրուած Է

Հակափտածութեան Կոմիտէն մանրամասնութիւններ յայտնած է Վաղարշապատի աւագանիի ընտրութիւններուն մասնակցած «Յաղթանակ» դաշինքի որոշ անդամներու տուններուն մէջ իրականացուած քննչական գործողութիւններուն վերաբերեալ:

Կոմիտէէն յայտնած են, որ ընտրակաշառք ստանալու, տալու եւ ընտրակաշառքի միջնորդութեան ղէպքերու առթիւ ՀՀ Հակափտածութեան Կոմիտէին մէջ նախաձեռնուած քրէական վարոյթներով մեղադրեալի դատաւարական կարգավիճակ ունի հինգ անձ:

Անոնց նկատմամբ ընտրուած են անազատութեան հետ չկապուած

խափանման միջոցներ:

«Յաղթանակ» դաշինքը Վաղարշապատ խոշորացուած համայնքի աւագանիի ընտրութիւններուն արդիւնքներով 10 հազար 51 ձայն ստացած է՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: Ընտրութիւններուն վստահ յաղթանակ տօնած է իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը՝ ստանալով 15 հազար 298 ձայն: Նոյեմբերի 17-ին ՀՀ Հակափտածութեան Կոմիտէն յայտնած էր, որ քննուող քրէական վարոյթներու ծիրին մէջ ապացուցողական եւ վարութեային այլ գործողութիւններ կ'իրականացուին «Յաղթանակ» դաշինքի խումբ մը անդամներու տուններուն մէջ:

Դատարանը 3 Ամիսով Երկարած Է Բագրատ Գալստանեանի Կալանքի Ժամկետը

Երեւանի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանը դատաւոր Կարէն Ֆարիտյեանի նախագահութեամբ որոշած է երեք ամիս ժամկէտով երկարացնել Գալստանեանի կալանքին ժամկէտը:

Յիշեցնենք՝ Քննչական Կոմիտէի հաղորդագրութեան համաձայն՝ «Սրբազան պալքար»-ի մասնակիցները եւ ղեկավարները ծրագրած են Հայաստանի մէջ ահաբեկչական գործողութիւններ: Ծրագրաւորման մասնակցած են շարք մը անձեր, ներգրաւուած են նախկին ոստիկաններ ու զինուորականներ:

Հրապարակուած են այս ամէնը հաստատող ձայնագրութիւններ եւս, որոնց մէջ տարատեսակ ցուցումներ կու տայ, ծրագրեր կը ներկայացնէ Գալստանեանը: Վերջինս, դատարանին որոշմամբ, կալանաւորուած է այս տարուայ Յունիս 26-էն:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան. Զայաստանի Զանրապետութիւնը
Իր Պատմութեան Մէջ Առաջին Անգամ Կ'ապրի
Խաղաղութեան Մէջ



Տեսարան մը Զայաստանի Զանրապետութեան առաջին Աղօթքի
Ուսումնական ժողովի ժամանակ

2025 թուականը շատ կարեւոր տարի է Հայաստանի Հանրապետութեան համար, որովհետեւ իր 34-ամեայ անկախութեան մէջ առաջին անգամ կրնանք ըսել, որ խաղաղութիւն հաստատուած է: Այս մասին յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ելոյթ ունենալով Հայաստանի Հանրապետութեան առաջին Աղօթքի նախաձաշի ժամանակ:

Հայաստանի Հանրապետութիւնը իր պատմութեան մէջ առաջին անգամ կ'ապրի խաղաղութեան մէջ, ըսած է վարչապետը, թերեւս կեանքով որ սա երկար ճանապարհ մըն է, որ անցած ենք՝ գուցէ շատ յաճախ լսելով եւ չիմանալով, նայելով եւ չտեսնելով այն ճանապարհը, որ Աստուած պատրաստած է մեր ժողովուրդին եւ մեր պետութեան համար:

Նիկոլ Փաշինեանի կարծիքով՝ այն, ինչ կը վերաբերի անհատին, նոյնը կը վերաբերի նաեւ պետութեան, եւ շատ էական է արձանագրել, տեսնել, կառուցել պետութեան կապը Աստուծոյ հետ: Վարչապետը ընդգծած է աստուածաշնչային սկզբունքները քաղաքական գործունէութեան, պետական կառավարման մէջ ներդնելու կարեւորութիւնը:

Խօսելով պետական պաշտօնեաներու բարեփոխութեան մասին՝ Փաշինեան նշած է. «Բարե-

փոխութիւնը բարեփոխումների թեմայ է, բարեփոխութիւնը կարգաւորումների, փոխզուտումների եւ հակաշփոխների թեմայ է, բայց հնարաւոր է բարեփոխութիւն առանց Աստուծոյ ներկայութեան, հնարաւոր է բարեփոխութիւն առանց Աստուծոյ խօսքի»:

Անդրադառնալով Միացեալ Նահանգներու Աղօթքի նախաձաշին՝ Նիկոլ Փաշինեան նշած է, որ խաղաղութեան գործընթացը երկու աղօթքի նախաձաշերու միջեւ տեղի ունեցած իրադարձութիւն է: Ըստ վարչապետին՝ սա թերեւս ինչ-որ հոգեւոր նշանակութիւն եւ իմաստ ունի:

«Երէկուայ եւ այսօրուայ անցկացրած ժամերն այս ձեւաչափում շատ մեծ հոգեւոր լիցք եւ ներուժ են տալիս փորձելու շարունակել այն ճանապարհը կամ վերստուգելուց, համոզուելուց յետոյ փորձելու հաւատարիմ լինել այդ ճանապարհին, եւ համոզուած լինել, որ բոլորս՝ ես, մեր կառավարութիւնը, մեր պետութիւնը, կառավարող թիւմը, ընդհանրապէս մեր երկրի բոլոր քաղաքացիները քայլում ենք այն ճանապարհով, որով մեզ առաջնորդում է Աստուած: Եւ կարծում եմ՝ հէնց խաղաղութեան ճանապարհն այն ճանապարհն է, որով մեզ առաջնորդում է Աստուած», - յայտնած է վարչապետը՝ իր խօսքը ամփոփելով 31-րդ սաղմոսով:

Արտաքին Պարտքը Աճած Է, Որովհետեւ Զէնք
Գնած Ենք. Զիւլաւատագրողներուն
Գնապիտակներն Ալ Ցոյց Կու տանք. Փաշինեան

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան խորհրդարանին մէջ «ՀՀ 2026 թ. պետական պիւտձէի մասին» օրէնքի նախագիծի քննարկման իր եզրափակիչ ելոյթին խօսած է արտաքին պարտքը մեծնալու պատճառներուն վերաբերեալ, որուն մասին օրերս Ազգային ժողովին մէջ յայտնած էր ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեանը:

Ըստ վարչապետին՝ արտաքին պարտքը աճած է, որովհետեւ գէնք գնուած է:

«Ընդդիմութիւնը մեզ մե-

ղադրում է՝ ասելով, թէ ինչու է պարտքը հասել 8 միլիարտ տոլարի: Ինչ է քարել: Ես չէի ուզում ասել, բայց կ'ասեմ՝ գէնք ենք առել: Պարտքով ենք առել: Այո՛, պարտքով ենք առել, որովհետեւ մեզ միանգամից շատ գէնք էր պէտք», - յայտնած է ան:

Զհաւատացողներուն ՀՀ վարչապետը առաջարկած է ցոյց տալ իր գնած գէնքերը, նոյնիսկ՝ գնապիտակները: Ան նշած է, որ անհամեմատելի են այժմեան գէնքերու եւ նախապէս ունեցած հաշկական գինանոցին նմուշները:

Սթանպուլի Մէջ Կայացած Է Զայաստանի Եւ
Ատրպէյճանի Խորհրդարանական
Պատուիրակութիւններու Զանդիպումը



Զայաստանի եւ Ատրպէյճանի Խորհրդարանական պատուիրակութիւնները
Սթանպուլի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի 23-րդ աշնանային նստաշրջանի ծիրին մէջ, Սթամպուլի մէջ կայացած է երկկողմ հանդիպում Հայաստանի եւ Ատրպէյճանի խորհրդարանական պատուիրակութիւններուն միջեւ:

Այն տեղի ունեցած է Հայաստանի եւ Ատրպէյճանի խորհրդարաններու նախագահներուն միջեւ Հոկտեմբեր 21-ին ժընեւի մէջ կայացած քննարկումներու ընթացքին ձեռք բերուած պայմանաւորութեան հիման վրայ:

Հանդիպման ընթացքին կողմերը ընդգծած են Ուաշինկթընի դաժմածոյովին դրական դերը եւ կարծիքներ փոխանակած

են ձեռք բերուած պայմանաւորութեան միջեւ խաղաղութեան ամրապնդման ուղղուած յաջորդ քայլերուն, ինչպէս նաեւ գործընթացին՝ երկու երկիրներուն մէջ խորհրդարանական աջակցութեան կարեւորութեան վերաբերեալ:

Անդրադարձ կատարուած է նաեւ երկու երկիրներուն միջեւ վստահութեան ամրապնդման միջոցառումներու իրականացման գործին մէջ խորհրդարաններու դերին: Երկուստեք շեշտուած է միջազգային կազմակերպութիւններու մէջ խորհրդարանականներուն միջեւ կառուցողական երկխօսութեան կարեւորութիւնը:

Պաքու Յմահ Բանտարկութիւն Պահանջած Է
Արցախի Ղեկավարութեան Զամար



Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները դատաւարութեան
ընթացքին

Պաքուի մէջ ընթացող շինծու գործով Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներու համար ատրպէյճանցի դատախազները ցմահ բանտարկութիւն պահանջած են:

Ըստ ներկայացուած պահանջներուն՝ ցմահ բանտարկութիւն առաջարկուած է Արայիկ Յարութիւնեանի, Լեւոն Մնացականեանի, Դաւիթ Մանուկեանի, Դաւիթ Բաբայեանի եւ Դաւիթ Իշխանեանի համար:

65 տարին լրացած ըլլալու պատճառով 20 տարուայ բանտարկութիւն՝ Արկադի Ղուկաս-

եանի, Բակո Սահակեանի եւ Մադաթ Բաբայեանի համար, իսկ 16-19 տարուայ պատժաչափեր՝ Գարիկ Մարտիրոսեանի, Դաւիթ Ալլահվերտեանի, Լեւոն Բալայեանի, Վասիլի Բեգլարեանի, Գուրգէն Ստեփանեանի, Էրիկ Կազարյեանի եւ շարք մը այլ անձե-րու համար:

Դատաւարութիւնը պիտի շարունակուի Նոյեմբեր 27-ին:

Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներուն եւ միւս գերիներուն նկատմամբ յարուցուած շինծու քրէական գործերով քննութիւնը աւարտած էր Հոկտեմբեր 31-ին:

ՀԾԿՅ.ի Նախագահը Կը Զերքէ ԴէՑ-ը Թուրքերուն Վաճառելու Մասին Լուրերը

Հանրային Ծառայութիւնները Կարգաւորող Յանձնաժողովի 3 անդամ Հոկտեմբերին մեկնած են Թուրքիա՝ մասնակցելու Ուժանիւթային Կարգաւորողներու տարածաշրջանային ընկերակցութեան աշխատաժողովին:

Լրագրողներու հետ զրոյցին այս մասին ըսաւ ՀԾԿՅ Նախագահ Մեսրոպ Մեսրոպեան՝ անդրադառնալով շրջանառուող քննարկումներուն, թէ ՀԾԿՅ անդամները Թուրքիա այցելած են իբր ՀէՑ-ը Թուրքիոյ վաճառելու բանակցութիւններու համար: «Այո՛, Յանձնաժողովի 3 անդամ՝ Սերկէյ Ադինեանը, Դաւիթ Մուրատեանն ու Ելենա Բաբոյեանը մեկնած են Թուրքիա այս տարուայ Հոկտեմբեր ամսին: Հայաստանը 1999թ-ից հանդիսանում է Ուժանիւթային Կարգաւորողների տարածաշրջանային ընկերակցութեան ոչ միայն անդամ, այլ նաեւ հիմնադիր անդամ»:

ՀԾԿՅ Նախագահը ըսաւ, որ Հայաստանի համար այս ժամանակաշրջանին օրակարգային են վերականգնողը՝ արեւային ուժանիւթին առնչուող խնդիրները: Ինչպէս նաեւ կան շուկայի ազատականացման վերաբերեալ օրակարգային խնդիրներ:

«Թուրքիա այցելութեան ընթացքում հիմնականում այս խնդիրներն են շօշափուել: Հետեւաբար, իլուր աշխարհի յայտարարել, թէ իբր զնացել են Թուրքիա, որ



ՀԾԿՅ Նախագահ Մեսրոպ Մեսրոպեան

բանակցեն, որ ՀէՑ-ը վաճառեն Թուրքերին, նման է գեբելսեան քարոզչութեանը, որ որքան սուտը մեծ է, այնքան հաւատացողները շատ կը լինեն», - ըսաւ ան՝ շեշտելով, որ նման բան պարզապէս չկայ: Վերջին օրերուն խումբ մը հանրային գործիչներ եւ լրատուամիջոցներ տեղեկութիւններ կը շրջանառէին, թէ իբր Հանրային Ծառայութիւնները Կարգաւորող Յանձնաժողովի անդամները Թուրքիա այցելած են այդ երկրին ՀէՑ-ի վաճառքի հարցով բանակցութիւններու համար:

2026 Թուականին Կառավարութիւնը Կը Կանխատեսէ 5,4% Տնտեսական Աճ

Ազգային ժողովին մէջ 2026 թուականի պետական պիտոճէի նախագիծը ներկայացնելու ժամանակ ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեան խօսած է տնտեսական աճի կանխատեսումներուն մասին:

«2026 թուականին մենք սպասում ենք 5,4% տնտեսական աճ՝ գրեթէ հասնելով ՀՆԱ 12 թրիլիոն մակարդակին, որը գերազանցում է մեր նախնական կանխատեսումները: Ի դէպ, նոյնիսկ Արժույթի Միջազգային Հիմնադրամը բարձրացրել է Հայաստանի աճի կանխատեսումը՝ 2026 թուականին սպասելով 5,4% տնտեսական աճ», - ըսած է նախարարը:

Ան նշած է 2021-2026 թուականներու ընթացքին իրականացուած բարեփոխումները:

«Ապագայ զարգացումը կառուցւում է մեր նախկին յաջողութիւնների եւ ընդունած որոշումների վրայ: Եւ այսպէս. վերջին հինգ տարիների արդիւնքներով



Ելեւմուտքի Նախարար Վահէ Յովհաննիսեան

մենք արձանագրել ենք միջինում 7,6% տնտեսական աճ, եւ ես ուրախ եմ, որ ՀՆԱ 5,4% աճի կանխատեսումը այլեւս տարօրինակ չէ:

Մոսկուա Կը Շարունակէ Երեւանի Դետ Փոխգործակցութեան Զարգացումը. Փետրով

Ռուսաստան կը շարունակէ զարգացնել փոխգործակցութիւնը Հայաստանի հետ՝ ինչպէս երկկողմանի, այնպէս ալ համարկման գործընթացներու միջոցով եւ մտադիր է շարունակել այդ: Այս մասին յայտնած է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փետրով:

«Մենք կը շարունակենք զարգացնել մեր փոխգործակցութիւնը Երեւանի հետ թէ՛ երկկողմանի, թէ՛ Երեւանի հետ համարկման գործընթացներու ծիրին մէջ: Մենք պիտի շարունակենք այդ ընել:

Յաճախակի շփումներ տեղի կ'ունենաւ ամենաբարձր մակարդակով», - ըսած է Փետրով՝ մեկնաբանելով Ռուսաստանի Արտաքին Հետախուզութեան Ծառայութեան հաղորդագրութիւնները, թէ Հայաստանը, իբր թէ, կ'ուզէ հրաժարիլ ռուսական հացահատիկէն յօգուտ ուղրանականին՝ Եւրոմիութեան միջոցներուն հաշուոյն:

Ան նաեւ նշած է, որ Ռուսաստանի Արտաքին Հետախուզութեան Ծառայութեան հաղորդագրութիւնները երբեք անհիմն չեն ըլլար:

Երեւանը՝ Աշխարհի Լաւագոյն Գիշերային Կեանք Ունեցող Քաղաքներու Տասնեակին Մէջ



Երեւանը յայտնուած է աշխարհի լաւագոյն գիշերային կեանք ունեցող քաղաքներու տասնեակին մէջ, կը տեղեկացնէ ՀՀ Զբօսաշրջութեան Կոմիտէն՝ ներկայացնելով Condn Nast Traveller-ի հրապարակումը:

Աշխարհի լաւագոյն գիշերային կեանք ունեցող քաղաքներու նոր վարկանիշը հրապարակած է JB թուային գուարճանքի հարթակը՝ ուսումնասիրելով անվտանգութեան մակարդակը, վայրերու խտութիւնը, գիներու մատչելիութիւնը եւ այցելուներու գնահատականները:

Առաջին տեղը Պարսելոնան է, որ ունի 304 պար եւ պանդոկ, ընդհանուր՝ 636 գիշերային ժամանցի վայր՝ 100 քառ. մ մակերեսի մէջ: Խմիչքի միջին արժէքը այստեղ մօտ 4,65 տոլար է, իսկ ակումբները յաճախ բաց են մինչեւ առաւօտեան 6:

Երկրորդը Փարիզն է՝ ամենաբարձր խտութեամբ ու ամենաթանկ խմիչքներով (8,15 տոլար), որուն կը յաջորդեն Թոքիօն եւ Փրակը:

Լաւագոյն հնգեակը կ'եզրափակէ Թիֆլիսը, որ կ'առանձնանայ

անվտանգութեան բարձր մակարդակով եւ մատչելի գիներով: Ցանկին վրայ յատուկ դիրք ունի Նաեւ Պալին, որ ստացած է գիշերային կեանքի ամենաբարձր միջին գնահատականը (4,64), չնայած քիչ վայրեր ունի:

Ամենաաժան խմիչքները եղած են Պուտափեշտի մէջ՝ 2,99 տոլար:

Երեւանը զբաղեցուցած է 7-րդ հորիզոնականը՝ 33 պար/պանդոկ 100 քառ. մ տարածքին մէջ, 48 գիշերային վայր եւ 3,40 տոլար միջին խմիչքի գինով: Քաղաքը ճանչցուած է իր տանիք-պարերով, Wine Street-ով եւ աշխոյժ միջավայրով:

Եւ այսպէս՝
2025-ի լաւագոյն գիշերային քաղաքներն են.
Պարսելոնա
Փարիզ
Թոքիօ
Փրակ
Թիֆլիս
Սէուլ
Երեւան
Պանքոք
Պալի
Պուտափեշտ

Սուրէն Պապիկեան Մասնակցած Է «Dubai Airshow 2025» Միջազգային Ցուցահանդէսի Բացման Արարողութեան



Հայաստանի պաշտպանութեան Նախարար Սուրէն Պապիկեան կը մասնակցի «Dubai Airshow 2025» միջազգային ցուցահանդէսին

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան մասնակցած է «Dubai Airshow 2025» միջազգային ցուցահանդէսի բացման հանդիսաւոր արարող-

ութեան, ներկայ եղած է օդային ցուցադրութիւններուն:

Այնուհետեւ նախարար Պապիկեան շրջած է ցուցահանդէսի տաղաւարներուն մէջ, ծանօթացած է ցուցանմուշներուն:

Փաշինեան-Ներսիսեան Առճակատումը



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Հայ մարդուն ունակութեամբ բարոյականը (morale) 44-օրեայ պատերազմի պարտութենէն ետք աւելի վատթարացաւ՝ ակնատես ըլլալով վերջին մի քանի ամիսներու պետութիւն-եկեղեցի փոխադարձ ցեխարձակումներուն:

Ամէն ինչ սահման ունի՝ կ'ըսէ հայկական առածը եւ այդ սահմանը անցած ըլլալ կը թուի էջմիածնի գահակալը՝ ըստ վարչապետ Փաշինեանի, որ Թաւշեայ լեզափոխութենէն ետք չէր ուզած բանալ Գարեգին Բ.-ի խնդրայարոյց եւ ոչ-պատուաբեր ծրարը:

2018 թուականի Թաւշեայ լեզափոխութենէն ետք, նախկին իշխանութեան պարագլուխները անհետացան եւ մնաց անոնց գործակից էջմիածնի աթոռին նստած գահակալը: Անոր ընտրութեան օրը կը համընկնէր Ազգային ժողովին մէջ թափուած արիւնին կարէն Դեմիրճեանի ու Վազգէն Սարգսեանի եւ ալլոց:

Պատերազմի մէջ արիւնով ձեռք բերուած յաղթանակները կը փառաբանուէին, իսկ արիւնով թաթախուած յաղթանակները սրբատեղիներու մէջ թախիժով կը յիշուէին:

Մեր ժողովուրդի մեծամասնութեան կողմէ փսփսուքներով շրջան ընող եւ տարածուող կասկածելի ընտրութիւնը կաթողիկոսին եւ անոր անվայել կենցաղը կուսակրօնութեան ուխտին հանդէպ, դարձան պոռթկումի առարկայ վարչապետ Փաշինեանի եւ անոր համակիրներուն կողմէ, երբ Սուրբ էջմիածնի գահին նստած կաթողիկոսը քաղաքական բեմ ելաւ իշխանափոխութիւն առաջ քշելով, եւ իր եպիսկոպոսաց դասին անաբեկչութեան դաս տալու թելադրանքով յանցաւոր դարձաւ:

Նախկին վարչակարգի մոլանետիկները միամտաբար կը շարունակէն բարբաջել, թէ պետութիւնը իրաւունք չունի միջամուխ ըլլալու եկեղեցւոյ հարցերուն: Անոնք կը մոռնան կամ չեն ուզեր ընդունիլ, որ եկեղեցին դարձաւ կողմ պետութեան դէմ՝ իշխանափոխութիւն պահանջելով Թաւշեայ լեզափոխութենէն ետք: Անոր կողմէ հրահրուած եւ քաղաքական դաշտ իջած «Սրբազան պաշարը»-ը սրբապղծեց մեր սուրբ եկեղեցւոյ համբաւը: Երբ Հայաստանը կեղեքող նախկին իշխանաւորներուն ամէն տեսակի հնարքներն ու ճիգերը ապարդին մնացին իշխանափոխութիւն յաջողցնելու, դիմեցին իրենց գործընկեր Գարեգին Բ.-ին, որպէսզի եկեղեցին դարձնեն գործակից

իրենց, եւ հոս է, որ եկեղեցականներ անջատուեցան մեր սուրբ եկեղեցւոյ ուխտէն ու խորհուրդէն եւ դադրեցան անոր հովանիին արժանի ուխտալիներ ըլլալէ:

Յաւալի է այս վիճակը եւ վնասաբեր մեր ազգային արժանապատուութեան ու բարոյականին: Լուծում մը պէտք է գտնել՝ դուրս գալու համար այս վիճակէն:

Պետութիւն-եկեղեցի առճակատումը ունի երկու դերակատար:

Պետութիւնը լծուած է Հայաստանը «Երրորդ աշխարհ»-ի փտածութեան վիճակէն դուրս հանելուն եւ զայն դարձնելու արդիական, գերծ՝ կաշառակերութենէ եւ հնամաշ քանդիչ ու աւերիչ սովորութիւններէ: Ամէն օր կը կարդանք լուրեր, թէ մարդիկ կը ձերբակալուին՝ յաճախ փտածութեան դէմ պաշարի մեղադրանքներով: Նախկին իշխանութիւններուն օրօք պետութիւնը իրենց ազարակը դարձնողները այժմ կը մատնանշուին, կը հարցաքննուին եւ կը բանտարկուին: Հայաստանի մէջ 2018-ին տեղի ունեցած յաջող լեզափոխութեան շնորհիւ այս իշխանութիւնը բարեկարգութիւններ կատարեց բոլոր բնագաւառներէ ներս: Ամէն սփիւռքահայ ցաւով կը դիտէր հայրենի գիւղերու խղճալի վիճակը՝ անցեալին երբ հայրենիք կ'այցելէր: Հիմա գիւղական բնակավայրերու մէջ բացուած են շուրջ 200 մանկապարտէզներ ու դպրոցներ եւ կառուցուած են դէպի գիւղեր տանող բարեկարգ ճամբաներ:

Ընդդիմադիր կողմի անձերէն մին վերջերս քննադատած էր իշխանութիւնը ըսելով, թէ փոխանակ դպրոց եւ ճանապարհ բանալու, պէտք է գործարան բանալ: Յատկանշական է Հայաստանի տնտեսութեան նախարարին գրառումը այս մասին, որ կ'ըսէ. «Դպրոց գնացած ու կրթուած մարդուն հնարաւոր չէ շահագործել ու կուպեկներով աշխատցնել: Հնարաւոր չէ իր ձայնը գնել ընտրութիւններում, իսկ չկրթուած, հետեւաբար խոցելի մարդու դէպքում, ցաւօք, հնարաւոր է»:

Մեր եկեղեցին ալ ունի պարտաւորութիւններ բարեկարգութեան կատարելու:

Եկեղեցականները պարտաւոր են շահիլ հայրենի ժողովուրդին վստահութիւնը:

26 տարի մամոնայի հանդէպ սիրահարութիւն դաւանող, բռնատիրութեամբ աշ ու ձախ անբասիր եկեղեցականներ կարգալոյծ ընող եւ շահախնդրութեամբ ուրիշի հաշուոյն քաղաքականութիւն խաղացող անարժան գահա-

Հայ-Ամերիկեան Աշխատանքային Խումբերը

Շարունակուած էջ 1-էն

նօրէն կարեւոր առեւտրային ուղի: Վերջերս վարչապետ Փաշինեան տեղեկացուց, որ «TRIPP» նախագիծի շահագործման իրաւունքի ժամկէտին շուրջ կը քննարկուի երկու տարբերակ՝ 49 եւ 99 տարի:

«Խաղաղութեան Խաչմերուկ. զարգացնելով տարածաշրջանային հաղորդակցութիւնները եւ համագործակցութիւնը» խորագրով միջազգային համաժողովի ընթացքին: Ան յաւելած է, որ ներդրումային վերադարձի հաշուարկները պիտի որոշեն վերջնական ժամկէտը:

«Այդտեղ ներդրումներ են արուելու եւ ներդրողը պէտք է ունենայ որոշակի երաշխիք, որ իր ներդրումները հետ է ստանա-

լու շահոյթի որոշակի չափով: Եթէ մենք, օրինակ, ասենք, որ հինգ տարով ենք տալիս այդ հողը, ոչ մէկ ներդրում չի անի, որովհետեւ անիրատեսական է հինգ տարում այդքան ներդրած գումարը հետ ստանալ: Եւ հիմա այդ քննարկումներն են, ընդ որում այդ քննարկումներին մեր վերաբերմունքը այսպէս ասած տեխնիկատնտեսական է կամ ֆինանսատնտեսական է: Այսինքն այստեղ մենք քաղաքական բաղադրիչ չենք տեսնում մի պարզ պատճառով, չկայ այդտեղ քաղաքական բաղադրիչ, այնտեղ կայ ֆինանսական բաղադրիչ, ով ինչքան է ներդնելու եւ որն է հաշուարկը, թէ ինչքան ժամանակում այդ ներդրումները կարող են հետ ստացուել որոշակի շահոյթով», - նշեց վարչապետը:

Արարատ Միրզոյեան Եւ Մակտալենա Կրոնօ

Շարունակուած էջ 1-էն

գործընկերութեան օրակարգը նոր նախաձեռնութիւններով լրացնելու, այդ շարքին՝ ՀՀ դիմակայունութեան շարունակական ամրապնդման ուղղութեամբ տարուող աշխատանքներուն:

Արարատ Միրզոյեան եւ Մակտալենա Կրոնօ միտքեր փոխանակած են տարածաշրջանային հարցերու շուրջ: Փոխադրութեան ու տնտեսական փոխկապակցուածութեան ցանցի ընդլայնման ծիրին մէջ ընդգծուած է ԵՄ «Համաշխարհային Դարպաս» եւ ՀՀ

«Խաղաղութեան Խաչմերուկ» ծրագրերու համադրելիութիւնը, անդրադարձ կատարուած է անոնց կեանքի կոչման ուղղութեամբ իրականացուող քայլերուն:

Հանդիպման ընթացքին միտքեր փոխանակուած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Օգոստոս 8-ի պայմանաւորուածութիւններով հաստատուած խաղաղութեան բերումով ստեղծուած հնարաւորութիւններու լաւագոյնս իրացման եւ խաղաղութեան հետագայ ամրապնդման ուղղուած ջանքերուն շուրջ:

ՀԾԿՅ-ն Որոշեց Դադրեցնել

Շարունակուած էջ 1-էն

նակաւոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսեան գրութիւններ ուղարկած էր Հանրային Ծառայութիւնները կարգաւորող Յանձնաժողով՝ տեղեկացնելով, որ 2025-ի Յունուարին ՀՀՅ-ի ինքնաշխատ հաշուառման համակարգը խափանուած է, իսկ 2018-էն սկսեալ՝ ջնջուած են ելեկտրականութեան հաշուառման ինքնաշխատ համակարգերու տուեալները: Սա կը դիտարկուէր ՀՀՅ-ի՝ ելեկտրականութեան բաշխման արտօնագիրը դադրեցնելու հիմք:

ՀՀՅ-ի թերհաւաքագրումներն ու յաւելագրումները ընկերութեան ելեկտրականութեան

բաշխման արտօնագիրը դադրեցնելու այլ հիմքեր էին: Այդպիսի հիմք էր նաեւ ընկերութեան կողմէ «Տաշիր կրոնի» մէջ մտած այլ ընկերութիւններու համար ֆինանսական երաշխիքներու տրամադրումը վարկեր ստանալու համար: Վարկերը ընկերութիւնը ստացած է Հայաստանի առեւտրային դրամատունէն:

Ըստ ՀՀՅ-ի ժամանակաւոր կառավարիչին՝ նախապէս զանգուածաբար նաեւ ոչ-ճշմարիտ տուեալներ ներկայացուած են ՀԾԿՅ-ին, ինչի հետեւանքով սխալ գնահատուած են բաշխման ցանցի ընթացիկ վիճակը, հոսանքի ընդհատումներու իրական քանակը, կորուստներու մեծութիւնները:

Մեր շնորհալի եկեղեցականները քննութեան պիտի ենթարկուին յառաջիկայ ամիսներուն՝ յաղթահարելու համար անհանդուրժելի բռնապետութեան մը իրենց պատճառած վախը, յօգուտ իրենց եկեղեցիի մաքրագործումին եւ իրենց կոչումին ու ուխտին՝ վերջ դնելով այս ազգային բարոյականութեան անկումին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթերօին

Massis2@earthlink.net (626) 797-7680

Pashinyan: Armenia Is Living in Peace for the First Time in Its History



YEREVAN - Prime Minister Nikol Pashinyan stated during Armenia’s first National Prayer Breakfast that 2025 is a very important year, because for the first time in its 34 years of independence, “we can say that peace has been established.”

Armenia is living in peace for the first time in its history, he said, adding that this has been a long journey—one we have often traveled without fully seeing or hearing the path that God has prepared for our people and state.

Pashinyan argued that what applies to the individual also applies to the state, emphasizing the importance of recognizing, seeing, and building the state’s relationship with God. He highlighted the need to incorporate biblical

principles into political activity and public administration.

Speaking about the integrity of public officials, he said: “Integrity is a matter of reform, of regulation, of checks and balances, but true integrity is impossible without God’s presence, impossible without God’s word.”

Referring to the U.S. National Prayer Breakfast, Pashinyan said the peace process is an event that has taken place “between two prayer breakfasts,” which he believes may carry spiritual meaning.

He concluded his speech with Psalm 31, saying that the hours spent in this prayer-breakfast format provide spiritual strength to continue or reaffirm the path that, in his view, God has set for the Armenian people.

Armenian-American Working Groups Begin Implementation the Washington Agreements



YEREVAN - Armenian-American working groups have begun operating to implement the Washington agreements and advance the “Trump Track.” The Armenian Government stated regarding the meeting between U.S. Deputy Assistant Secretary of State Alison Hooker and Prime Minister Nikol Pashinyan.

On the American side, the working group will be led by Deputy Assistant Secretary Sonata Coulter, who oversees U.S. policy toward Russia and Central Europe.

Coulter previously served as Deputy Political Counselor at the U.S. Embassy in Moscow.

Back in October, the State Department announced that the U.S. government intended to establish its first working groups with Armenia and Azerbaijan by the end of this year. It remains unclear whether a U.S.–Azerbaijani working group has also been formed.

During her conversation with Nikol Pashinyan, Alison Hooker stressed that continued cooperation between the United States and Armenia—combined with progress toward a comprehensive peace agreement between Armenia and Azerbaijan and normalization of relations with Turkey—promises to open the South Caucasus as a vital trade corridor.

Alison Hooker also met Armenian Foreign Minister Ararat Mirzoyan on Monday.

The sides discussed the development of Armenia-U.S. strategic partnership and reaffirmed readiness to deepen cooperation in mutually relevant fields, including energy, infrastructure, artificial intelligence, and investment promotion.

“I am pleased to note the dynamic political dialogue aimed at expanding the

Continued on page 4

Civil Contract Party Wins Vagharshapat Local Elections



YEREVAN — According to the November 16 local self-government elections in Vagharshapat, *Civil Contract* party candidate Argishti Mehakyán won 15,298 votes and will become the head of the community.

The opposition failed to repeat its success in Gyumri. Civil Contract will assume sole control in Vagharshapat.

Argishti Mehakyán thanked his teammates and all who voted for him.

Political forces approached the Vagharshapat elections as a prelude to the 2026 parliamentary elections. Arayik Harutyunyan also noted this, calling the opposition’s defeat “crushing.”

Continued on page 4

PSRC Revokes Electric Networks of Armenia’s Distribution License

YEREVAN — Armenia’s Public Services Regulatory Commission (PSRC) has revoked the electricity distribution license of the Electric Networks of Armenia (ENA).

Today, the PSRC resumed the discussion—launched on November 13—on revoking ENA’s distribution license.

ENA’s temporary manager, Romanos Petrosyan, had sent letters to the PSRC informing it that ENA’s automated metering system malfunctioned in January 2025, and that since 2018 data from the automated metering systems had been deleted. This was considered grounds for revoking the company’s license.

Other grounds included ENA’s under-collection and over-billing practices, as well as the company’s provision of financial guarantees to other firms within the Tashir Group for obtaining bank loans. These loans



were taken from Armenian commercial banks.

According to the temporary manager, large quantities of inaccurate data were previously submitted to the PSRC, resulting in incorrect assessments of the distribution network’s condition, the true number of outages, and the scale of losses.

Ex-Karabakh Leaders Face Life Sentences, Lengthy Prison Terms In Baku Trial



BAKU—Prosecutors in Azerbaijan have requested prison terms ranging from 16 years to life for former political and military leaders of Nagorno-Karabakh, as well as other Armenian detainees, during an ongoing trial in Baku.

Azerbaijani authorities captured a number of former Karabakh officials, including three former presidents of the republic, following Azerbaijan’s 2023 capture of the region. The military operation conducted by Azerbaijan forced all ethnic Armenians of Nagorno-Karabakh to flee to Armenia, ending nearly three decades of their push for independence from Baku.

Defendants in the trial, which began in January, are accused of starting and conducting war, genocide, terrorism, the violent seizure of power, and other serious crimes.

According to Azerbaijan’s state-run Azertac news agency, the prosecution on Thursday asked the court

to sentence former Nagorno-Karabakh President Arayik Harutiunian, former Defense Army commander Levon Mnatsakanian, former Defense Army deputy commander Davit Manukian, former Parliament Speaker Davit Ishkhanian, and former Foreign Minister Davit Babayan to life imprisonment.

Azertac reported that prosecutors sought 20-year sentences for former Artsakh presidents Arkady Ghukasyan and Bako Sahakyan, citing Azerbaijani law that bars life sentences for individuals aged 65 or older.

Prosecutors also asked for 20-year terms for Madat Babayan and Melikset Pashayan. They requested a 19-year sentence for Garik Martirosian, an 18-year sentence for Davit Alaverdian, a 17-year sentence for Levon Balayan, and 16-year sentences for Vasilii Beglarian, Gurgen Stepanian, and Erik Ghazarian.

The next hearing in the trial is scheduled for November 27.

Defense Minister Suren Babikyan Attends Opening Ceremony of “Dubai Airshow 2025”



DUBAI-- Armenian Defense Minister Suren Papikyan attended the official opening ceremony of the Dubai Airshow 2025 international exhibition

and watched the aerial demonstrations. Papikyan then toured the exhibition halls and familiarized himself with the displays.

Yerevan Ranked Among World’s Top Cities for Nightlife



Yerevan has been listed among the world’s top cities with the best nightlife, according to a publication by *Condé Nast Traveller*, reported by Armenia’s Tourism Committee.

The ranking was compiled by JB Digital Entertainment, which examined safety levels, venue density, affordability, and visitor ratings.

Barcelona ranked first, with 304 bars and clubs—636 nightlife venues in total—per 100 km². The average drink costs about \$4.65, and clubs often stay open until 6 a.m.

Paris came second, with the highest venue density and the priciest drinks (\$8.15), followed by Tokyo and Prague.

Tbilisi completed the top five, standing out for its high safety and low prices. Bali earned the highest average

nightlife rating (4.64), despite having fewer venues.

The cheapest drinks were in Budapest, averaging \$2.99.

Yerevan ranked seventh, with 33 bars/clubs per 100 km², 48 nightlife venues overall, and an average drink cost of \$3.40. The city is known for its rooftop parties, Wine Street, and lively atmosphere.

Top Nightlife Cities of 2025:

1. Barcelona
2. Paris
3. Tokyo
4. Prague
5. Tbilisi
6. Seoul
7. Yerevan
8. Bangkok
9. Bali
10. Budapest

Gevorg Kostanyan and Vahagn Harutyunyan Still Wanted in March 1 Case



Former Prosecutor General Gevorg Kostanyan and former head of the investigative group for the March 1 case, Vahagn Harutyunyan, remain wanted, the chairman of the Anti-Corruption Committee, Artur Nahapetyan, stated during public hearings in Parliament.

According to Nahapetyan, Harutyunyan has been charged for organizing a process in which investigators and police officers replaced cartridge cases of various calibers found during the scene examination and sub-

mitted to experts. The charges also state that Harutyunyan falsified information regarding the involvement of the armed forces in the March 1 events, thereby helping Gevorg Kostanyan—who represented the Armenian government before the European Court of Human Rights—conceal a particularly grave crime and commit official falsifications.


Hetq had previously reported that Kostanyan, who has been wanted by law enforcement since 2019, obtained Russian citizenship and has been reg-

istered in Moscow since January 2022.

The chairman of the Anti-Corruption Committee noted that the criminal case materials for the March 1 investigation comprise 600 volumes. Due to its scale, since 2025 the inves-

tigation has been assigned to a joint investigative team that includes 24 investigators from the Anti-Corruption Committee and the Investigative Committee. The preliminary investigation is ongoing.

Harutyun Marutyan's New Book Published "Commemorating the Armenian Genocide"



LONDON/NEW YORK—I. B. Tauris, an imprint of Bloomsbury Publishing, has announced the publication of Prof. Harutyun Marutyan's *Commemorating the Armenian Genocide*. The book is part of the series *Armenians in the Modern and Early Modern World* edited by Bedross Der Matossian (University of Nebraska, Lincoln).

Commemorated annually on April 24, Armenian Genocide Remembrance Day is a vital part of national identity in both Armenia and the diaspora. This book offers a historical and anthropological perspective on how Armenians commemorate the genocide and how its significance has evolved over time. It begins with the first demonstrations by survivors in Allied-occupied Constantinople in 1919 and traces the fluctuations in the politics of the genocide and its official and popular memory during the Stalinist ban, the Khrushchev thaw, and beyond. The book also details the rituals of the annual march to the Armenian Genocide Memorial in Yerevan and other memorial sites, analyzing how the collective memory of this foundational event is embodied and continues to influence Armenian identity today.

Marutyan commented: "Since my school years, for more than half a century, I have visited the Armenian Genocide Memorial on April 24 every year to pay tribute to the memory of the innocent victims. Due to my profession, I eventually began to pay attention to people's behavior, speech, and attire. I became interested in the question of when Armenians have been celebrating April 24, as well as the developments it has had in Armenia and the Diaspora over the course of a century. I have always been interested in the symbolism of the memorial complex as a whole, as well as its different parts. Existing research did not answer all the questions that interested me. And since I was already specializing in memory issues, I began to study these issues as well. As a result, I participated in several conferences with reports, articles were born, and, gradually, the idea of a monograph matured."

According to Marutyan April 24 is not just a Remembrance Day for the victims of the Armenian Genocide. It is one of the most important and distinctive elements of Armenian identity, invisibly connecting and uniting all Armenians. The Remembrance Day

has been shaped by many political twists and turns, and even a century later, its various interpretations are still widely discussed by social and professional circles. *Commemorating the Genocide* with an annual one-day event reflects and embodies the current state of society, serving as a summary of the realities, concepts, policies, and propaganda at a given moment. At the same time, honoring the victims of the Genocide does not depend solely on whether this day is observed.

For Marutyan, the memory of the Medz Yeghern has been subtly present in many forms in the survivors and their descendants, in the hearts of those who are aware of the Genocide. It is reflected in their speech, conversations, behaviors, attitudes, and actions throughout their lives. Discussing the significance of Remembrance Day involves examining the full range of ways in which the memory of the Genocide manifests. Since the issue is too broad for just one chapter, only a selection of topics are addressed here. However, the questions discussed aim to shed some light on the problem.

"This groundbreaking study on the commemoration of the Armenian Genocide, authored by one of Armenia's leading anthropologists, represents a landmark contribution to the field," said Der Matossian, editor of the series. "Marutyan's book is the first comprehensive work to trace the evolution of genocide remembrance over the past century. Through an incisive analysis of the rituals, symbols, and commemorative language that have shaped public memory, the study offers innovative perspectives and opens new avenues for understanding how a nation constructs and transforms its collective remembrance," he concluded.

Reviews

"Memory keeps a nation alive, Even if you cut off its heads, an Armenian poet wrote, the nation is like a hydra that will grow back many more. Anthropologist Harutyun Marutyan gives us a forgotten history of how Armenians around the world, and eventually in Soviet Armenia, remembered their martyrs in the Armenian Genocide of 1915. Commemoration is fundamental to the passing on of memory. Even the young architects who designed the Tsitsernakabert Monument to the Genocide did not know what the

AGMI Researchers Expose for the First Time the Hidden Role of Female Perpetrators in the Armenian Genocide



YEREVAN — The Armenian Genocide Museum Institute (AGMI) is proud to announce the publication of a pioneering article, "In the Shadow of Genocide: Female Perpetrators of the Armenian Genocide," in the internationally recognized journal *Women's History Review*.

Authored by Dr. Edita Gzoyan, Dr. Elina Mirzoyan, and Dr. Regina Galustyan, the study explores a largely overlooked aspect of the Armenian Genocide—the role of women as active participants and perpetrators. Drawing on rare archival materials, survivor testimonies, and contemporary accounts, the research reveals how gender, ideology, and power intersected in processes of violence and complicity during the genocide.

Twentieth-century genocides challenge the notion that women are inherently "peaceful," showing that women, too, could engage in incitement, propaganda, and direct acts of violence. This study addresses a significant gap in Armenian Genocide scholarship by examining the involvement of Turkish women. Using oral and written testimonies, memoirs, and other sources, the research demonstrates that women participated in a spectrum of actions—from incitement

and propaganda to direct killings—and highlights forms of institutional participation that warrant further investigation.

By foregrounding women's involvement, the study contributes to more holistic approaches in genocide research and underscores the importance of including female perpetrators in comprehensive analyses of the Armenian Genocide.

Dr. Edita Gzoyan, Director of AGMI, commented: "This study sheds light on a profoundly underexplored dimension of the Armenian Genocide. Examining women as perpetrators broadens the historical record and challenges simplified perceptions of victimhood, complicity, and agency." She continued: "It offers a more nuanced understanding of the complex roles, motivations, and dynamics that shaped the genocide."

This publication reinforces AGMI's growing role as a leading international research hub dedicated to uncovering new perspectives and fostering academic dialogue on the Armenian Genocide and comparative genocide studies. AGMI continues to encourage interdisciplinary research that deepens knowledge of the past and contributes to the global field of genocide studies.

Yeghern (Genocide) was when they took up the task. In this beautifully written history, we learn how memory was transmitted for the last one hundred years, a story that has not hitherto been told. Like monuments and commemorations, this book is one of the transmitters that keeps the past alive in the present." —Ronald Grigor Suny, author of "They Can Live in the Desert But Nowhere Else": A History of the Armenian Genocide

"The monograph by the Armenian historian and former director of the Armenian Genocide Museum-Institute, Harutyun Marutyan, traces the changing course of Armenian remembrance culture and history politics with exceptional knowledge and from his own experience. It also explains the special features of Armenian commemorative rituals. Under Soviet rule, the (Eastern) Armenian settlement area that remained after the Ottoman genocide had to fight for decades for the right to self-determined remembrance. It was not until 1965 that Moscow

allowed a memorial to be erected in Armenia's capital, Yerevan. Since 1967, the impressive memorial has been the second pan-national place of remembrance in Armenia, alongside the Armenian Apostolic Catholicate in Echmiadzin. And it was not until 1988, almost at the end of Soviet rule, that the Soviet Armenian government dared to make April 24 (1915) a national day of remembrance and mourning. Today, recalling the darkest periods of Modern Armenian history constitutes an essential part of Armenian identity. As a descendant of Western Armenian genocide survivors, the author Harutyun Marutyan played a significant role in shaping this development." —Tessa Hofmann, author; scholar of Armenian and genocide studies; Berlin

"Every group victimized by mass extermination expresses its pain and the trauma endured by the survivors and their descendants. When, moreover, this supreme crime has gone

Continued on page 4

The Knights of Vartan's Tabibian Family Scholarship Empowers STEM Education in Armenia



By **GOHAR PALYAN**

YEREVAN —The Knights of Vartan's Tabibian Family Scholarship has supported a total of 16 students since 2023, providing full one-year scholarships to students at Yerevan State University and the National Polytechnic University of Armenia. The scholarships focus on students pursuing degrees in Science, Technology, and Engineering, with recipients including youth from across Armenia and refugees from Artsakh.

Since the 1990s, Knights of Vartan Inc. has partnered with these universities to provide scholarships to talented students based on both academic excellence and financial need. Over the decades, more than 340 students have benefited from this partnership. Building on this legacy, the Tabibian family Scholarship was launched in 2023 to further expand educational opportunities for Armenia's next generation of innovators and engineers.

Dr. Tabibian's vision was not only to enable students to pursue higher education in science and technology but also to strengthen Armenia's future in these essential fields. His family has committed \$1 million over a five-year period, beginning in 2022, to the Knights of Vartan Inc. The annual yield from this fund provides scholarships to students in STEM fields at both universities. Preference is given to students who demonstrate strong academic performance and a commitment to remain and work in Armenia after graduation.

Growing up in Lebanon, Dr. Tabibian developed a desire to help talented youth who might otherwise abandon their education in favor of early employment. His lifelong commitment has now become a meaningful opportunity for many young Armenians to pursue their dreams.

Each spring, scholarship announcements are distributed, with selections finalized by September. During the "Back to the Homeland" annual trip, the Knights of Vartan delegation personally meets with scholarship recipients and presents their certificates. This year, all five Yerevan State University recipients expressed their gratitude in fluent English, highlighting their appreciation for the organization and the donor's generosity.

One recipient Gevorg Nersisyan, a student at the Yerevan State University, shared: "I express my profound gratitude to the Knights of Vardan organization and Dr. Tabibyan and his family for their support. Your financial sponsorship enabled me to continue my master's studies and acquire new, deeper knowledge. Your support also represents a responsibility for me. I aspire to become a skilled professional so that I may contribute to the strengthening and prosperity of my country, especially the flourishing of my place of birth."

Knights of Vartan Inc. remains deeply committed to continuing and expanding the scholarship program in the years ahead, ensuring that more students have access to the education and opportunities they deserve.

Philanthropist Saad Kassis-Mohamed Commits 120,000 Dollars for Early Childhood Support in Armenia

YEREVAN — Philanthropist Saad Kassis-Mohamed, chairman of WeCare Foundation, has announced new support for early childhood development in Armenia. The initiative will deliver practical help that families and teachers will feel immediately: early learning kits and classroom materials for kindergartens and community centers; caregiver workshops; basic health screening for young children; winter readiness for classrooms, including heating support; and simple water and sanitation upgrades sized for small children.

Phase one will run with local partners in Yerevan, Gyumri and Vanadzor, with disbursements beginning in December. The initial target is to reach up to 1,200 children ages three to eight and train 150 teachers and caregivers. Priority sites will receive new handwashing stations and child-friendly toilets, along with teach-



Delivery will follow a simple, transparent model. Partner educators will use a common checklist to select classrooms and centers, prioritizing sites with crowded rooms, limited heating and gaps in basic supplies. Teacher training will cover play-based learning, early numeracy and literacy, class-



ing aids and take-home materials so parents can continue learning at home.

"This work is about small things that change a day for a child," said Saad Kassis-Mohamed. "A warm classroom, a safe tap, a simple set of learning tools and a trained adult who knows what to look for. We will keep it practical, publish what is delivered and where and listen to partners on the ground."

WeCare Foundation will issue a short public summary after the first phase, showing locations served, people reached and the services provided. The initiative will be coordinated with municipal education teams and community organizations to avoid duplication and to make access straightforward for schools and families.

room warmth and safety and how to spot developmental or vision concerns for referral. Community sessions for parents and caregivers will run in Armenian and Russian, with materials that can be taken home. Wherever possible, supplies and minor works will be sourced locally to support jobs and speed up installation before the coldest weeks.

Monitoring will track attendance, classroom warmth and safety checks, the number of screenings completed and caregiver participation. A feedback channel for teachers and parents will be open throughout the term, so that adjustments can be made quickly and the public summary will be published in Armenian and English.

Armenian-American Working Groups Begin

Continued from page 1

bilateral agenda, enriching our strategic partnership with new content and concrete initiatives, as well as the U.S.'s continued engagement in strengthening the peace that has been established," Mirzoyan said.

They also reviewed progress on implementing the agreements reached on August 8 in Washington. With the symbolic 100th day of the Washington

Peace Summit approaching, Mirzoyan and Hooker noted the progress achieved so far and discussed the remaining steps.

They exchanged views on preparatory work for the "Trump Track for International Peace and Prosperity," emphasizing its significance for developing transportation corridors and other connectivity networks across a wider geography.

Mirzoyan and Hooker also discussed other regional issues.

Harutyun Marutyan's New Book Published

Continued from page 3

unpunished, as is the case in Turkey,

the demand for justice becomes a central element of society. In this respect, Harutyun Marutyan's study offers a

Civil Contract Party Wins

Continued from page 1

The Prime Minister congratulated Mehakyan on his victory.

In the morning, Nikol Pashinyan also addressed his team's victory in Vagharshapat on his Facebook page—first congratulating all residents of Vagharshapat on the democratic elections. He then made several remarks and apolo-

gized for all the mistakes Civil Contract had made in the community.

According to the published results, the Sunday local elections were won by Civil Contract with 15,298 votes. The Victory bloc received 10,051 votes; Pan-Armenian Front—295; Republic—1,241; Mother Armenia—1,692; Free Democrats—1,177; Heritage—440; and the Homeland party—1,193 votes.

comprehensive overview of the various forms of expression in Armenian society, which is still dominated by this legacy. His anthropological approach is masterly and will undoubtedly contribute to further reflection on the consequences of genocide." —Raymond Kévorkian, Director of

Research Emeritus, Université Paris VIII, Saint-Denis, France

Copies of Commemorating the Armenian Genocide are available for purchase on the Bloomsbury Press website. Enter code GLR AT8 at the checkout on bloomsbury.com for 35% off.

«Արարատ»-ի Շնորհաւորական Բարեմաղթանքը «Մասիս»-ի 45-Ամեակին

«Արարատ»-ի տնօրէնութեան, խմբագրակազմին եւ ողջ պաշտօնէութեան անունով կը յայտնենք մեր ջերմագին շնորհաւորանքները «Մասիս» շաբաթաթերթին՝ հիմնադրութեան 45-րդ տարեդարձին առիթով:

Չորս տասնամեակէ աւելի «Մասիս»-ը իր անշեղ աշխատասիրութեամբ, գաղափարական հաւատարմութեամբ, որպէս ինքնատիպ ձայն կը շարունակէ իր մամուլյ ծառայողական առաքելութիւնը Ամերիկայի մէջ: Այս երկար ուղին կերտուեցաւ ընթերցողներու ակնկալութիւնները արժեւորելով, կամաւորներու նուիրումով եւ խմբագրական հետեւողական աշխատանքով՝ համադրելով սփիւռքահայ իրականութեան խնդիրները, հայրենի լուրերը եւ աշխարհասփիւռ հայութեան մտահոգութիւնները:

Կլենտէյլի մէջ տեղի ունեցած 45-ամեակի հանդիսութիւնը վկայութիւնը եղաւ ոչ միայն «Մասիս»-ի անցնող պայծառ ուղիին, այլ նաեւ այն գնահատանքին, որ կը վայելէ ան ԱՄՆ-ի, Հայաստանի եւ սփիւռքեան կառույցներու մօտ: Տօնակատարութեան մասնակից էին հայ եւ ամերիկացի ներկայացուցիչներ, եկեղեցականներ, կուսակցական մարմիններ, ինչպէս նաեւ ԱՄՆ գոնկրեսի անդամ Լորա Ֆրիտմընը, որուն կողմէ խմբագիր Գրիգոր Խոտանեանին շնորհուեցաւ «Գոնկրեսական Գնահատանքի Վկայագիր»: Նշանակալի էր նաեւ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Կարէն Իսրայէլեանի ուղերձը, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ՝ գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեանի տեսերիզային պատգամը: Օրուան գլխաւոր բանախօսն էր Փաստաւիտայի Յովսէփեան վարժարանի ժրջան տնօրէն՝ Թատերագիր Շահէ Մանկրեան:

«Արարատ»-ը՝ իբրեւ համանման գաղափարական ուղի ունեցող երկօրեայ թերթ, կը գնահատէ իր ամերիկաբնակ գրչեղբօր՝ «Մասիս»-ի լրագրողական ընթացքը, ազգային-միութենական ծառայութիւնը եւ հայապահպանութեան մէջ ունեցած այն դերը, որ կը գերազանցէ սովորական մամուլի առաքելութիւնը:

«Մասիս»-ի խմբագիր ընկեր Գրիգոր Խոտանեանին եւ գաղափարակից ընկերներուն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ, ընթերցողական աւելի լայն շրջանակ ու եւս տասնամեակներու լուսաւոր ուղի:

Շնորհաւոր 45-ամեակդ, «Մասիս»:

«Մասիս»-ի 45 Ամեակ Դողանջ Յարատեւ Կեանքի

Ռ. ԿՈՐԻԻՆ

Շնորհաւորանքներ ե մաղթանքներ «Մասիս»-ին գարդարեալ ուղիով ի փառս հայ ազգի ե հայրենիքի յարատե կեանքի:

Հայ մամուլի գոյութիւնը ապացոյցն է սփիւռքահայութեան լինելիութեան, հետեւեալ իւրաքանչիւր հայ պարտի իր հայութեան հիմքերը ամրապնդել որպէսզի մամուլի նուիրեալները ուժ ու կորով ստանան շարունակելու հայերէնով հրատարակումը:

Արդարեւ սրտագինս ուրախանում ենք, երբ լսում ենք նոր թերթ, նոր գիրք է հրատարակւում, առաւել եւս երբ թերթի յրբեւեանն է նշում, որն ապացոյցն է թերթի յարատեութեան եւ հրատարակիչներին անխախտ հետեւողականութեան եւ գուգուրանքի իրենց որդեգրած գաղափարախօսութեան առ ի ծառայութիւն հայրենիքին եւ ժողովրդին:

Երկու պարագան էլ գովելի է, քանի որ գրքի ծնունդ է, նոր լուծալի ներդրումը գրականութեան գանձանակում, իսկ հրատարակողը՝ եղածը, իր յուսատու եւ փորձառու աշխատանքի ընթացքն է շարունակում ի խնդիր ազգային արժէքների պաշտպանութեան ե դիմակայումը մարտահրաւէրների:

Այո՛, մամուլը քահ է տեղեկատուութեան:

Խաւարի դէմ լոյս է:

Կեղծիքը քողագերծող է:

Անարդարի դէմ արդարադատ է:

Այո՛, մամուլը բերդ է պաշտպանութեան մեր հայրենիքի, ազգութեան, հաւատքի ե մշակոյթի:

Մեր սփիւռքեան իրականութեան մէջ հայ մամուլի առաքելութիւնը մեծ է, անդրադարձումը հաւաստի լուրերի տարածմանը, անհրաժեշտութիւն է առանց կուսակցական նկատառումների պաշտպան կանգնել հրատարակող թեր-

Պատճէշի Վրայ Կը Մնաս Սիրելի «Մասիս»

Այս տարի Արեւմտեան ափին վրայ եւ ստոյգ՝ Փաստաւիտայի հայահոծ շրջանէն ներս հիմնուած՝ «Մասիս» Շաբաթաթերթը կը բոլորէ իր 45 - Ամեակը: Յուզուելու եւ միաժամանակ հրճուելու բարեբաւտիկ առիթ մը:

Երբ 1980-ին՝ ոչինչէն կը ծնի հայ լրատուական աղբիւր մը, Հայկական թերթ մը՝ մի քանի «խենդ»երու նախաձեռնութեամբ, հետեւեալ դառնալով հայ ժողովուրդի խնդիրներուն եւ բոլոր հարցերուն խօսափողը՝ ազգային թէ՛ քաղաքական՝ եւ իր ժողովրդավար լոգունգներով՝ պաշտպանը հայ անհատին եւ հայ դատին:

Այսօր, յատկապէս սփիւռքի մէջ ստեղծուած պայմաններու ներքեւ՝ հրաշքի համահաւասար է թերթի մը անխափան հրատարակութիւնը: Եւ այս օրերուն, երբ սուտն ու շիտակը նոյն ձեւով կը ներկայացուին, «Մասիս» առաջնակարգ կ'ընտրէ հարազատն ու իրականը, որովհետեւ ան տեղ չունի քառսի եւ չփոթի:

Սկիզբէն ի վեր՝ իր հաստատակամ եւ անփոփոխ քայլերով՝ ան վստահութեամբ առաջնորդած է բոլորս:

«Մասիս» գիտէ զատորոշել, մտածել եւ դատել: «Մասիս» գիտէ պաշտպանել եւ կամ խուսափիլ...

«Մասիս» կը հենի հայապահպանութեան եւ հայ դպրոցի բարօրութեան եւ մշակոյթի ամրութեան եւ բարգաւաճման: Իսկ անդրադառնալով ամենակարեւոր եւ հզօրագոյն իրականութեան՝ «Մասիս» խօսափողն է Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարախօսութեան եւ անոր մնայուն օրկանն է Գալիֆորնիոյ մէջ: Անոր մէջ լոյս տեսած են եւ ներկայացուած՝ ազգային հերոսներու գաղափարասիրութիւնը, անոնց ճկունութիւնը եւ յուսադրումները՝ արձագանգելով մինչեւ ցայսօր:

Երէկ եւ այսօր՝ մեր հիմնական մտահոգութիւնը եղած է մեր հայրենիքը: Մենք պարտաւոր ենք պարկեշտ ըլլալ, տրամաբանութեամբ եւ ճկունութեամբ հաղորդակցիլ՝ խնայելով ամէն տեսակի վնասակար եւ չար ազդակները:

Եւ վերջապէս՝ եկէք մենք ալ հոգ տանինք Հայ Թերթին եւ Հայ Մամուլին :

Գուրգուրանք մեր Մայրենի լեզուին եւ ըլլանք միշտ պարկեշտ եւ խրոխտ գաւակները մեր ազգին, առանց յոգնելու եւ տեղի տալու ...

Կանաչ ձանապարհ՝ Սիրելի «Մասիս» , Երկարակեցութիւն քեզի այս պատասխանատու եւ լուրջ հայապահպանման գործին մէջ եւ լիակատար խաղաղութիւն մեր Հայրենիքին:

ԼԵՆԱ Ս.

Թերին, որոնք ինչ գոհողութիւններն եւ պայմաններն ենք, լոյս են տեսնում սփիւռքում՝ իրենց էջերում լուսարձակում, խրախուսանք եւ քաջալերանք են դառնում գրողներին եւ արուեստագէտներին, նրանց արարումները հանրութեանը ծանօթացնելով:

Ահա՛ «Մասիս»-ը, մէկը մեր սփիւռքեան լրագրերից, որ արժանի հանդիսաւորութեամբ նշուեց նրա 45-րդ տարեդարձը խանդավառ մթնոլորտում պատուարժան հիւրերի եւ հոծ թիւով հանդիսականների ներկայութեամբ Նոյեմբերի 9-ին, 2025 թ.Լոս Անջելէսի Իրանահայ Միութեան դահլիճում: Այս գրութեամբ չէ որ թղթակցութիւն եմ կատարում, նկատելով թերթը ինք բովանդակալից անդրադառնալու է այդ շքեղ հանդիսութեան, սա միայն ողջոյնի խօսք

է՛ ընդհանրապէս հայ մամուլը պաշտպանելու ե գօրավիզ կանգնելու համար:

Ինչպէս գիտենք «Մասիս»ը ճիշաբար է տրուում ընթերցողին այն ցանկութեամբ՝ որ իւրաքանչիւր տնից ներս հայ թերթ մտնի, հայի ոգով ներշնչելու, ջերմացնելու եւ լուսաւորելու:

Թող որ անխափան ու շողարձակող տեղեկատուութեամբ եւ շաբաթական արեահամ «Մասիս»ը մնայ բոլորի փնտրող թերթը:

Ահա յոբելեանական այս ոգեւորիչ առիթով սրտագին մաղթանքներս առ այն տքնաջան աշխատանքի, զոր տարւում է թերթի լոյս ընծայման գործում, անսպառ ուժ ու եռանդ այս սրբազան առաքելութիւնը աներկբայ շարունակելու համար:

Վարձքներդ կատար:



Forward Law Group

EXPERIENCED PERSONAL INJURY ATTORNEYS SERVING LOS ANGELES

WWW.FORWARDLG.COM

(818) 471-8389

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈԳԻ ՇԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՇԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԱՄՆ Արեւմտեան Թեմի Նոր Դարու Ուղին
Դոկտ. Զրաչ Զիլինկիրեան Կը Բացատրէ Աւանդութեան Եւ Նորարարութեան Խաչմերուկը

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ արեւմտեան թեմը կը մօտենայ իր հիմնադրութեան հարիւրամեակին: Այս պատմական հանգրուանին առիթով, թեմը՝ գլխաւորութեամբ բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, սկսած է հեռանկարային «Հաստատութեանական Նորարարութեան» (Institutional Innovation) նախաձեռնութիւն մը: Այս նախաձեռնութեան տնօրէն նշանակուած է ընկերաբան, սփիւռքագէտ, համալսարանի դասախօս Դոկտ. Զրաչ Զիլինկիրեանը:

Վերջերս Դոկտ. Զիլինկիրեանի հետ անգլերէնով կատարուած հարցազրոյց մը՝ ստորագրութեամբ Սերգէյ Արուստամեանի ոչ միայն լոյս կը սփռէ ընդհանուր այս նախաձեռնութեան եւ ցարդ իրականացած քայրերուն վրայ, այլեւ կը կատարէ խորաթափանց անդրադարձ մը եկեղեցւոյ առաքելութեան գոյատեւման ժամանակակից աշխարհին մէջ:

«Հաստատութեանական Նորարարութիւնը» կարգախօս մը է, այլ վերանորոգութեան ուղի մը, որուն նպատակն է, կ'ընդգծէ Դոկտ. Զիլինկիրեան, քրիստոնէական հատուկ ու հայկական ժառանգութեան՝



թիւնը վերածել ապրող փորձառութեան՝ ապրելակերպ մը, որ մարդ չի ժառանգեր միայն, այլ կ'ապրի զայն, կը կիսէ ուրիշին հետ եւ կը շարունակէ զարգացնել:

Արեւմտեան թեմը, որ 1927-էն ի վեր ներգրաւուած է համայնքային, մշակութային եւ հոգեւոր կեանքին մէջ, այսօր կանգնած է նոր մարտահրաւէրներու դիմաց՝ ինչպէս ընկերային արմատական փոփոխութիւններ, արհեստագիտութեան սրնթաց յառաջդիմութիւն եւ սերունդներու նոր մտածողութիւն: Այս բոլորին դիմաց՝ ժառանգութիւնը պէտք է դառնայ շարժման հիմք, ոչ թէ սահման,

դիտել կու տայ դոկտ. Զիլինկիրեան:

«Մեր կատարած առաջին քայլերէն մէկը էր՝ թեմին «Առաքելութիւնը, Տեսլականը եւ Արժէքները» սահմանել եւ փորձել եկեղեցին բերել 21-րդ դար», կը բացատրէ Դոկտ. Զիլինկիրեան: Անցեալ տարի եռամսեայ քննարկումներէ ետք, այսօր մէկ էջի վրայ յստակ ձեւով արտայայտուած է Արեւմտեան թեմի առաքելութիւնը, տեսլականը եւ արժէքները: Սա ճանապարհի քարտէզն յառաջիկայ տարիներու համար, որ ուղղութիւն պիտի տայ թեմի առաքելութեան:

Հարցազրոյցին արծարծած եւ բնականօրէն նորարարական ծրագրին ամենէն խորքային թեմաներէն մէկը ղեկավարութեան հարցն է: Արեւմտեան թեմը ունի աւելի քան հազար գործուն ղեկավարներ՝ ծխական եւ թեմական խորհուրդներու անդամներէն մինչեւ սարկաւազներ, դպիրներ, ուսուցիչներ եւ կամաւորներ: Կարեւոր թիւ ներկայացնող այս ուժը այժմ պէտք է օժտել նոր գիտելիքներով եւ վերակազմակերպել զայն նոր տեսլականով: Այս առումով, Դոկտ. Զիլինկիրեան կը ներկայացնէ քանի մը հիմնարար ծրագրեր՝ «Ծխական Ղեկավարութեան Վերապատրաստման Ծրագիրը», «Դպիրներու Ղեկավարութեան Ծրագիրը»

եւ «Աշխարհականներու Հոգեւոր Ծառայութեան Ծրագիրը»: Այս նախաձեռնութիւնները սոսկ վարչական վարժողական աշխատանքներ չեն, այլ կը միտին վերակենսադրելու ղեկավարութիւնը՝ հաւատքի, ծառայութեան եւ համայնքա-



յին տեսլականի շուրջ: Ան կը շեշտէ, որ ղեկավարութեան վերաթարմացումը պէտք է սկսի ներսէն՝ կրթութեան, գործակցութեան եւ հոգեւոր հասունութեան միջոցով, որ ապա կարենայ ճառագայթել դէպի ծխական եւ համայնքային կեանք:

Արեւմտեան թեմը մեկնար-

Շար.ը էջ 15

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԶԿԵՐԱԿԸ

ԵԿԷ՛Ք ՎԱՅԵԼԵՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՈԳԻՆ:
«ԲԱԶԿԵՐԱԿԸ» ԲԵՄ ՄԸՆ Է, ՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՆ ԵՐԳՈՎ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՊԱՐՈՎ:




ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ՆՈՒՌ ՀԱՄՈՅԹԻՆ
ԵՒ ԼԵՌՆԱԶԱՆԳ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ
ՁԵՌՆԱՐԿԻՆ ՀԱՄՈՅԹԸ ՊԻՏԻ ՅԱՏԿԱՑՈՒԻ ՀԱՅ ԿԻՆ-Ի ՅՂԻ
ԿԱՆԱՆՑ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

A NIGHT OF CULTURE AND CHARITY
WEDNESDAY, DECEMBER 10, 2025 - 7:00PM

\$50

AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN PERFORMING ARTS CENTER
2495 E MOUNTAIN ST. PASADENA , CA 91104
FOR MORE INFO CONTACT HYEGEEN@AGBU.ORG OR CALL (626) 794-7942

Միշտ Այժմեական, Զթառամող, Անգուգական Յակոբ Պարոնեանը



ՅԱԿՈԲ ՏԻՆԵԱՅԵԱՆ

19 Նոյեմբերին, հայ հանձա-րեղ մեծանուն երգիծաբան, գրող, թատերագիր, երգիծագրութեան ազ-գային հիմնադիր Յակոբ Յովհան-նէսի Պարոնեան (Ատրիանապոլիս, Էտիրնէ, 19 Նոյեմբեր 1843 - Կ. Պոլիս, 27 Մայիս 1891) կը բոլորէ իր ծննդեան 182-ամեակը:

Հայ երգիծանքի շղթաները ուռնահարող մեր դարբինները կու գան Ե. դարու իրենց մատենագի-տական գործերէն, ուր ոսկեդար-եան մեր գրականութեան ծաւալուն յուզումներուն խորը, բազմաբիւր բառերով՝ էջ առ էջ, ներշնչման հուրքով, այլեւ հոգեկան փաղաղիչ եռանդով կրկէս է հանուած երգի-ծական խօսքը՝ յանուն հայ ժողո-վուրդի անաղարտ ինքնութեան կերտման, անոր գոյատեւումին ու արժանապատուութեան պահպան-ման:

Արդարեւ, յիշեալ դարու եւ միջնադարեան մեր մատենագիր-ներուն լեզունը երգիծանքի երկ-սալրի սուրը օգտագործած է իբրեւ պահանջատիրական սաստ, որ կը վերբերէ հայուն պայքարի, ըմբոս-տութեան տեսակարար կշիռը՝ փա-ռատենչութեանց ու շողոմին կեղ-ծաւոր, քաղքենի գոռոգութիւննե-րուն դէմ քաջերուն մտածումներն



ու զգացումները դրուագելու արիու-թեամբ մը:

Այո, այդ երկերը երգիծան-քով հանուեցան հերոսական կար-կառներու: Իմացական ու հոգեկան աջն վսեմափայլ տուրքերը ուրիշ բան չէին, եթէ ոչ՝ գերագոյն նպա-տակ՝ գալիք սերունդներուն յանձ-նելու անմարելիութիւնը մեարդպե-ան Մայրենիին, վարդանակերտ հաւատքին:

Եզնիկ Կողբացիի մը «Եղծ Աղանդոց»ը՝ օրինակի համար, չէ՛ սովորական երկ մը, ուր ամբողջ

մեր ժողովուրդը կայ ոտքի՝ Հողով ու Եկեղեցիով, ուր փրկիսոփայա-կան միտքի հօր սլացքներով կը դատափետուին աղարտած կրօն-ներն ու սոփեստ աղանդներ...: Ան լաւին՝ լա՛ւ, վատին՝ վա՛տ ըսելու տեսակ մը հաւատակուռ թուղթ մ'է, ուր Յագկերտն ու Վասակ Սիւնին կը շքեղագարդեն հիքու-թիւնը իրենց վախճանին: Աւելի՛ն, «Եղծ Աղանդոց»ը զինարան մ'է մաքառման, յորդութիւն ճառա-գայթման՝ երգիծական երակներէ, որ լեցուցած են մտածման տաք տուրքերը Սմբատ Զահրեանդացիի մը՝ հիմնադիրը Թոնդրական շար-ժումին, որ միջնադարեան Հայաս-տանի ազգային, հասարակական, ընկերային այլասերիչ կեանքի փրկութիւնը փնտռեց Լուսաւորչե-եան նկարագիրին ու միտքին ան-վեհեր նահատակութեանը մէջ:

Այլ տեղ, Եղիշէի «Վարդա-նանց Պատերազմը»՝ Վասակի «ազ-գադաւութեան» ու «խաբեբայու-թեան» դէմ արշաւասույր նետ մ'իբ-րեւ, բաւ էր, որ հնադարեան մեր պատմութիւնը զբաղեցնէր մատե-նագէտ-պատմագէտները հատորնե-րու հեղեղատին մէջ, զբաղեցնէր մինչեւ այսօր ալ նո՛յն մատենա-գէտ-պատմագէտները, որոնք սպա-ռիչ ու զիրենք հոգեմաշ դարձնող վերլուծութիւններէ ետք ալ դեռ կը յամենան հասնիլ բիւրեղացման՝ ընթերցողին եւ ուսանողին միտ-քին մէջ, սիրտէն ու զգացումէն առաջ:

Խորենացիի «Ողբ»ին, Փաւս-տոս Բիւզանդի եւ Ղազար Փար-պեցիի «Հայոց Պատմութիւն» եր-կերուն մէջ, ուղղափառութեան անուղղաներուն, սնափառներուն, աւարառուներուն եւ օտար բռնա-կալներուն դէմ մղուող հերոսապա-տումները, վիրտի ինչ անտարագե-լի ցասումով յօրինած են անբռնա-բարելի արժանապատուութիւնը մեր ժողովուրդին՝ գերդ գեղար-ուեստական վաւերագրութիւնք ու անհանգելի նմոյշներ:

Յակոբ Պարոնեան, իր ժամա-նակներէն անդին՝ ապագայի հա-մար եթէ չունենար զինք չափա-զանց անհանգստացնող համազգա-լին տարողութեամբ խոր ցաւ ու վիրշտ՝ փրկելու արժանապատուու-թիւնը մեր եկեղեցական, քաղաքա-կան ու ընկերային բարքերուն ներսը գոռացող խաթարիչ ու պա-ռակտիչ երեւոյթներու, մեր ճարա-կուող տգիտութեանց ու փաղփուռ հաւկուրութեանց, իր հալածախ-նաւորի կեանքը չէր ընդ իր ազգին ի խնդիր նաւաւար ու նաւապետ՝ քարափին վրայ իր ապ-րած ժամանակներու, ԱԶԳԱՅԻՆ ԶԳԱՍՏԱՅՄԱՆ հասնելու եւ հա-

մազգային աղէտը կանխարգիլելու նպատակով:

Սա գրուածները՝ լոյսին բեր-ուած անգուգական երգիծաբանին ծննդեան տարեդարձին առիթով, թող չըմբռնուին մակերեսային ցա-ւի փրփուրներ, վասնզի դո՛ւք, հայ ժողովուրդ, մի՛շտ պիտի փնտռէք քանքարավառ խենթերու գործե-րուն մէջ այն յուսահատ մաքա-ռումները, պայքարները, որոնք լեռնացած են՝ յանուն արդար ու ճշմարիտ խօսքի:

Յակոբ Պարոնեանին ապրած դարաշրջանը՝ երգիծաբանին իսկ բնութագրումով այն ժամանակաշր-ջանն է, երբ «ճշմարտութիւնը դրուած էր դագաղի մէջ», «քնա-ցած էին ողջմտութիւնն ու անաչա-ռութիւնը», իսկ «անկեղծութիւնը գետեղուած էր յանցանքներու ցան-կին մէջ»:

Ապաքէն, քաղաքականօրէն դրամատիրական ճնշող հասարա-կարգ մը՝ սուլթանական Պոլսոյ բռնապետական փաստովը տարած-ուած, ուր թալանչի դրամի, աղա-յական մամոնայի ու անոնց հաս-



տափոր եւ հաստավիզ համբալնե-րու յարձակումներուն պատճառով կ'անշքանար տաղանդը մարդուն՝ ինչպէս է մերկ իրականութիւնը այսօրուան Սփիւռքի եւ Հայաստա-նի մէջ, սալոններու մէջ մեր խայ-տաբղէտ «ղեկավարութեանց», «վերնախաւին», անհասանելի ջո-ջերուն, որոնց շուրջը կը քսուռու-տին ու կը լցուրուտին միջակու-թեանց միջակութիւնները, անգր-չակոթ գրչակները, պիցցայագգ (հայաստանցիներուն շատ սիրած եւ տեւաբար օգտագործող մէկ բառը) վա՛յ լրագրող-լրագրողու-հիները՝ կախուելով քիթէն փոլի-թիքոսներու, թող ներուի ըսել՝ կրծելու համար քաքոտ կատարնե-րը կեղծիքի, սուտի ու ինքնախա-բէութեան, ի վնաս ժողովուրդի ընդհանրական շահերուն...:

Հարկ է անդրադառնալ Պա-րոնեանի ապրած ժամանակաշր-ջանի առկայ ճնշումներուն ազա-տութեանց վրայ: Այն ատեն ալ եղած են մորթապաշտ-նիւթապաշտ «ազգայինճի»երու օղապլացիկ յա-ծումներ: Մտաւորական իրաւ ար-ժէքներու նսեմացման տեւական փորձեր: Հայ մամուլը շնչահեղձ ընելու նկրտումներ: Յետոյ, երկրի Ազգ. սահմանադրութեան հռչա-կում: Սան Սթեֆանոյի դաշնագիր ու Պերլինի վեհաժողով: Վանի ազատագրական շարժում ու գոյա-պայքար: Հայ քաղաքական կու-սակցութիւններու ստեղծման ժա-մանակներ՝ 1885-1890 տարիները նկատի առնելով: Իսկ հայ գրակա-նութեան համապատկերին մէջ՝ Զարթօնքի սերունդէն դէպի Իրա-պաշտ սերունդ անցման ու կազմա-ւորման շրջան:

Վերջապէս, 19-րդ դարու՝ 1860-1890-ականներ երկարող ժա-մանակները, որոնք նշանակալից եղան Յակոբ Պարոնեանի նման հանձարեղ երգիծաբանի գրական կեանքին մէջ՝ հայ գրականութեան զանձարանը հարստացնելու առու-մով:

Ուսման գծով թերաւարտ մը ան, բաց ազատ ասպարէզի մէջ տարերանգ ստորոգելիներով շա-րունակուած իր տարապարհակի կեանքը - նախ նախ դեղատան մը մէջ աշխատող պաշտօնեայ, ապա հաշուապահ, լրագրող, ուսուցիչ, Պոլսոյ Հայոց պատրիարքարանին մէջ քարտուղար, հուսկ՝ խմբագիր - աւելի ուշ եկաւ լեցուիլ երգիծա-կան սեռին յատուկ հարուստ մթեր-քով, որ հաղորդականութիւն, ջեր-մութիւն, տիրականութիւն, խօս-քի ու սաստի ուժգնութիւն, մա-նաւանդ նոր միտքի մը յեղափո-խութեան յաղթանակը բերաւ մեր գրականութեան:

Պարոնեանի գրական գործը սկսած է «Երկու Տէրով Ծառայ Մը» (1865) թատերական անդրա-նիկ երկով, որուն յաջորդեցին «Ատամնաբոյժն Արեւելեան» (1868), «Շողոքորթը» (1872, անա-ւարտ երկ, զոր կէս դար ետք շարունակեց ու աւարտին հասցուց երկրորդ մեծանուն երգիծաբանը՝ Երուանդ Օտեանը), «Ազգային Զո-ջեր» (1874), «Կամիթներ» (1878), «Պտոյտ Մը Պոլսոյ Թաղերուն Մէջ» (1880), «Հոսհոսի Զեռա-տետրը» (1880), «Ծիծաղ» (1883), «Պաղտասար Աղբար» (1886-1887), «Քաղաքավարութեան Վնասները» (1886-1887), «Մեծապատիւ Մու-րացկաններ» (1887, առանձին հա-տորով), «Խօսակցութիւնք Մեռե-լոց» (1886-1887) եւ թատրոնի նուիրումը քաղաքական երգիծան-քի անմրցելի վայելք պարգեւող բարձրարժեքի երկեր:

Յիրաւի ստեղծագործական չթառամող բերքեր, որոնք իրա-պաշտութեան սալին վրայ մրձա-հարեցին ոչ միայն ազատական քողի տակ արեւմտամէտ մտաւո-րականութեան քրքմագգեստ ներ-կայացուցիչներու զաղափարական սնանկութիւնը, այլեւ հոգեւոր իշ-խանութեան քաղքենի, տկուափոր տիպարները, ինչպէս՝ հոգեւորա-կան-մտաւորական Խորէն արքե-պիսկոպոս Նար-Պէյը, որ իբրեւ կուսակրօն եկեղեցական եւ ըստ քաղքենի-պուրժուա մամուլին՝ «անշահախնդիր է, կը վայելէ բա-րոյական մեծ վարկ», մինչ ըստ Պարոնեանի «... ան չէր նայէր կիներու՝ եթէ անոնք ծեր ըլլային, եւ հետեւապէս, կուսակրօն ըլլալու համար ամէն տրամադրութիւն ու-նէր»: Ականջները խօսին այսօր-ուան «կուսակրօն», այլեւ շատ երիտասարդ կիներու նայող եկեղե-ցականներուն...:

Յակոբ Պարոնեանի գրակա-նութիւնը երգիծանքի սեռէն խի-զախօրէն իրապաշտութեամբ պոռթ-կուն, հայ ժողովուրդին տուաւ այնպիսի գլուխ-գործոցներ, ուր հեզմանքը, ծաղրը, կենդանի ու բնական յորդահոս յօրինումները, զանգուածներուն ամէնէն զգայուն լարերուն դպան առանց ընելու ճիգը ծաղրի, առանց հեզնելու մէկը՝ միւսին հաշուոյն, անոնք (հեզմանքն ու ծաղրը) հուսկ ըն-թերցողին սիրտին մէջ վերածելու թորացող ցաւի կայլակներու...: Ու այս, գրագէտ, հանձարեղ Պարոնե-անի իրատեսութեան գլխաւոր յատկանիշերէն մէկն է, եթէ ոչ

Արեւմտահայերէնի Անփոխարինելի Կորուստը Ոչ Եւս Է ԲԺ. Արմենակ Եղիայեան



Միայն լիբանանահայու- թիւնը չէ որ կորսնցուց իր գտարիւն ու պատկառելի մտա- ւորականներէն վերջինը, այլեւ արեւմտահայերէնն ալ որբա- ցաւ քանի մը օր առաջ, երբ այս աշխարհէն լուիկ-մնջիկ հրա- ժեշտ առաւ բԺ. Արմենակ Եղ- իայեանը, բոլորին ծանօթ նշա- նաւոր «տոքթոր»-ը:

Հիմա ո՞վ պիտի մատնանշէ մեր լեզուական թերութիւններն ու սխալները մեր թերթերուն մէջ: Ո՞վ պիտի սաստէ հայ խմբագիրներն ու յօդուածա- գիրները՝ որպէսզի անոնք աւե- լի նախանձախնդիր ըլլան մեր ոսկեղնիկին նկատմամբ: Ո՞վ պարզաբանումներ պիտի բերէ մեզի՝ արեւմտահայ քերական- նութեան առօրեայ խնդիրնե- րուն կամ բարդ ու անծանօթ գաղտնիքներուն մասին:

Չկայ: Հրապարակը ամա- յացաւ, անապատի վերածուե- ցաւ:

Հիմա մենք, իբրեւ մամուլի ու գիրի սպասաւորներ, որո՞ւն պիտի դիմենք այսուհետեւ՝ արեւմ- տահայերէնի քերականական սա կամ նա հարցին վերաբերեալ յստակ ու մեկին պատասխաններ ստանալու համար...:

Տոքթ. Արմենակին մահով կ'անհետանայ սփիւռքահայ այն հագուազիւտ լեզուաբաններէն մէ- կը եւս, որ տասնամեակներ շա- րունակ անդադար ծծեց բառա- րաններու եւ հայագիտական հին ու նոր հատորներու հիւթը ու իր հրաշալի մեկնաբանութիւններն ալ աւելցնելով անոնց վրայ՝ մատ- չելի ձեւով հրամցուց զանոնք հանրութեան, առանց երբեք յոգ- նելու, առանց ձանձրանալու, առանց յուսահատելու:

Հին շրջաններու Մխիթար- եան երեւելի լեզուաբաններուն կրկնօրինակն էր կարծէք:

Հասած էր հասուն տարիքի մը: 86 տարեկան էր, սակայն կը

պահէր ակնբախ թարմութիւն մը: Իր մտային պայծառութիւնը նախանձելի էր: Լեզուաբանա- կան գիտութեանց եւ հայ գրա- կանութեան քալող հանրագի- տարան մըն էր, որուն նմանօ- րինակը գրեթէ չկար մեր շուրջ, թերեւս չէինք ունեցած անցեա- լին եւս: Իր «Ուղեցոյց»-ը, որ 800 էջանի կոթողային գործ մըն է, մտքի ու պրպտողական ճիգի եւ համադրումի անգերա- գանցելի աշխատանք մը պիտի մնայ, որ նաեւ պիտի անմահաց- նէ իր անունը:

Ինչ մեղք սակայն, որ լիբա- նանահայութիւնը չկրցաւ (կամ չխորհեցաւ) հրապարակային մե- ծարանքի մը կամ ժողովրդային սիրոյ արտայայտութեան մը ընդմէջէն գնահատել, հրապա- րակաւ պատուել իր այս մեծ գաւակը: Ինչո՞ւ անտեսուեցաւ: Առիթները չէին պակսեր բնաւ. ծննդեան 75-ամեակ մը, 80- ամեակ մը, յետոյ 85-ամեակ մը եկան ու անցան աննշմար...: «Ուղեցոյց»-ին հրապարակումն անգամ խթան չեղաւ մեր «մշա- կութային» միութիւններէն մէ- կուն կամ միւսին՝ մտածելու, թէ անոր հեղինակը արժանի էր հրապարակային երախտիքի մը, ծափահարութեան մը, տաքուկ ողջոյնի մը...

Ափսո՛ս...: Ուշ է այլեւս: Բաժակը կոտրելէն ետք է որ միայն կ'անդրադառնանք անոր արժէքին:

Տոքթորը մեկնեցաւ: Գո՞նէ չմոռցուի իր գործը: Գո՞նէ մեր հայեացքը չհեռաց- նենք այն վիթխարի աշխատա- սիրութենէն, որ տոքթորին «Ու- ղեցոյց»-ը հանդիսացաւ եւ որուն էջերէն ամէն օր կրնանք շիթ մը գիտելիք սորվիլ, քայլ մը յա- ռաջ երթալ հայերէնի մեր թերի իմացութեան մէջ:

«ԱՐԱՐԱՏ»
Լիբանան

Ամերիկահայ Բժիշկի Բազմատեսակ Գեղանկարներու Նուէրը Վեներտիկի Մխիթարեան Միաբանութեան



Մխիթարեան միաբանութեան հիմնադրութեան 325-ամեակի յօ- բելինական շրջանին առթիւ տեղի ունեցաւ կարեւոր իրադարձութիւն մը, Ամերիկահայ բժիշկ-վիրահատ Ճոն Յովհաննէս Ներսիսեան միա- բանութեան նուիրեց հայ արուես- տագէտներու 41 գեղանկարներ եւ այլ արուեստի գործեր: Այս բոլորի ցուցադրութեան առթիւ՝ վեներտի- կի Ս. Ղազար կղզիին մէջ, կազմա- կերուեցաւ յատուկ հանդիսութիւն մը, ստեղծելով ոգեւորիչ մթնո- լորտ:

Միաբանութեան անունով՝

Հայր Գեորգ Սարգիսեան, Տոքթ. Ճոն Յովհաննէս Ներսիսեանի նկատմամբ յայտնեց իր երախ- տագիտութիւնը: Այսպիսով՝ վե- նետիկի Սուրբ Ղազար կղզիի Մխիթարեան միաբանութեան մայրավանքի հաւաքածոն հա- մալրուեցաւ արուեստի կարեւոր գործերով, ինչ որ յօբելինական շրջանի կարեւոր ձեռքբերումնե- րու շարքին կը դասուի:

Վերոյիշեալ հանդիսութեան ընթացքին «Եղեախա» համոյթն ալ հանդէս եկաւ երաժշտական կատա- րումներով:

Հայ Արուեստագէտի Մասնակցութիւնը Միւնիխի Միջազգային Ցուցահանդէսին

Միւնիխի մէջ, Գերմանիա, վերջերս բացուած է միջազգային ժամանակակից մետալներու ար- ուեստի ցուցահանդէսը FIDEM ուր իրենց աշխատանքները ներկայա- ցուցած են աւելի քան 30 երկիրնե- րու 350 արուեստագէտներ: Հոն ներկայացուած են նաեւ հայազգի մետալագործ Գուրգէն Յակոբեա- նի աշխատանքները:

Ներկայացուած 500 գործերը՝ ամբողջացուած է «Մեր առասպել- ները՝ մեր արմատները» խորագրի ներքեւ: Աշխարհի զանազան եր- կիրներէ ցուցադրուած աշխատանք- ները, ընդհանուր երկխօսութեան մէջ են՝ արտացոլացնելով նաեւ ինքնատիպ բազմազանութիւն:

Սոյն ցուցահանդէսին ներկա- ցուած են Գուրգէն Յակոբեանի երկու գործերը: «Մետալները, որոնք ներկայացուցած են Միւնի- խի ցուցահանդէսին, կը կոչուին «Դիցաբանական երազ»: Անոնք՝ որոշ չափով, կը համապատասխանեն

ցուցահանդէսի խորագրին: Այլա- բանական, առասպելական եւ այժմ- եան կերպաներու համադրութիւնը զուգահեռուած է մետալի փոքր մակերեսին վրայ՝ հաղորդելով անց- եալի առերեսումը ներկայի հետ» ըսած է արուեստագէտը:

FIDEM-ը՝ միջազգային մե- տալագործութեան դաշնակցութիւն մըն է, որ երկու տարին անգամ մը, տաբեր երկիրներու մէջ կը կազմա- կերպէ համաժողով եւ ցուցահան- դէս: Գուրգէն Յակոբեան FIDEM - ի անդամ է եւ ներկայացուցիչը Հայաստանի մէջ: Ան ունի մետալ- լագործութեան արուեստի գծով ստեղծագործութիւններ՝ նուիրուած հայ յօրինողներու, ինչպէս՝ Եղր- ուարդ Միրզոյեան, Տիգրան Ման- սուրեան, Առնօ Բաբաջանեան, եււ այլք:

Միւնիխի մէջ բացուած ժա- մանակակից մետալի ցուցահան- դէսը բաց պիտի մնայ մինչեւ 2026 թուականի Յունուարի 25-ը:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻՔԹՈՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեաններ իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն Գրիգորեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս» շբաթերթին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$75,00 * \$150,00 (first class) for USA

\$ 250,00 (Air Mail) for Canada.

\$ 400,00 (Air Mail) Overseas.

ԱՄՆ Արեւմտեան Թեմի Նոր Դարու Ուղին

Շարունակուած էջ 12-էն

կած է «Նորարարենք Մեր Ծխական Համայնքը» նախաձեռնութիւնը՝ ուղղուած տեղական եկեղեցիներու եւ ծխական խորհուրդներու վերաշխուժացման: Նպատակն է իւրաքանչիւր ծուխ վերածել կենդանի հաւատքի եւ մշակոյթի օճախի: Ֆրեզնոյի, Լոս Անճելըսի եւ Սան Ֆրանսիսքոյի շրջանային հանդիպումները արդէն սկսած են խթանել երկխօսութեան եւ փորձառութիւններու փոխանակման մշակոյթ մը:

Հարցազրոյցին մէջ, Դոկտ. Ջիլինկիրեան կը ներկայացնէ նաեւ Թեմին վերջին նախաձեռնութիւններէն մէկը՝ «Նորարարութեան եւ Մամուլի Կեդրոնը» (Innovation and Media Center) առաջնորդարանի շէնքին մէջ, որ պիտի ունենայ արդիական սարքաւորումներ եւ ուսուցման ծրագրեր երիտասարդներու համար: Այս նախաձեռնութեան նպատակն է Թեմը դարձնել հաղորդակցական կեդրոն մը, ուր նոր սերունդը պիտի սորվի ստեղծել, հաղորդակցիլ, podcast-ներ պատրաստել եւ կիսել իր հաւատքն ու ինքնութիւնը նաեւ թուային միջավայրին մէջ, ուր երիտասարդութեան մեծամասնութիւնը այսօր կը գտնուի:

Դոկտ. Ջիլինկիրեան կը շեշ-

տէ, թէ «Հայ եկեղեցին չի կրնար քարացած մնալ»: Նորարարութիւնը այստեղ չի նշանակեր հրաժարիլ աւանդութենէն, այլ՝ կենսաւորել գայն: Եկեղեցին պէտք է դառնայ ապրող իրականութիւն մը, ներգործող շարժում մը եւ ոչ ծէսերու թանգարան մը: Այս կոչը ուղղուած է նաեւ համայնքի բոլոր անդամներուն՝ դառնալու հաւատքի եւ ժառանգութեան գիտակից դերակատարներ, ու ոչ միայն կրաւորական ու անուանական ժառանգորդներ:

Հարցազրոյցի աւարտին, դոկտ. Ջիլինկիրեան կ'արձագանգէ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի տեսլականին՝ «այս ընթացիկ ծրագիր մը չէ, այլ շարժում մը»: Հետեւաբար, Արեւմտեան Թեմի հարիւրամեակը ոչ միայն կը դառնայ առիթ մը անցեալի յիշատակումին, այլեւ հրաւէր մը ուղղուած ապագային:

Այս իմաստով, Դոկտ. Հրաչ Ջիլինկիրեանի ղեկավարութեամբ ընթացող «Հաստատութեական Նորարարութեան» նախաձեռնութիւնը կը դառնայ ռազմավարական մեթոտ մը՝ թէ ինչպէս կրնան հայ եկեղեցական կառույցները ամբողջ սփիւռքի տարածքին վերանորոգել իրենց առաքելութիւնը՝ մնալով հաւատարիմ աւանդութեան, բայց միաժամանակ անսալով ժամանակի մարտահրաւէրներուն:

Միշտ Այժմեական, Զթառամող, Անգուգական

Շարունակուած էջ 13-էն

գլխաւորագոյնը:

Այսպէս, մեծանուն երգիծաբանը իր Աստուածառաք տաղանդը ծառայեցուցած է ամբողջ աշխարհ մը տաղաւարելու իր մտասեւեռումին տակ: Աշխարհ մը, երբ իր «Եփրատ»ն ու «Մեղու»ն, «Թատրոն» եւ «Խիկար» երգիծաթերթերը դիմակայեցին փակման սպառնալիքը, ենթարկուեցան անգամ օսմանեան տիքթաթի հալածանքին՝ այդ պետութեան խստաբարոյ կանոններուն համաձայն, շուրջ երկու տասնամեակ՝ 1872-1891:

Պարոնեանի ապրած վերջին երկու տասնամեակները մեծ երգիծաբանին մէջ ստեղծեցին՝

1.Լեզուապաշարի շուրջ կարողականութիւն, որ Վարդան Մամիկոնեանի գաղափարաբանութեան կորիզը կազմող եւ անոր հաւատարիմ՝ երգիծաբան գրական առաքեալի մը անպարտելի ոգին է: Այսինքն, գրողին խօսքով՝ «... լեզու ունենալ եւ ժողովուրդին իրաւանց պաշտպանութեան համար չխօսիլը համը Վասակ ըսել է»:

2.Իրապաշտ աշխարհահայեացք՝ անարդարութեանց մթին ու մգլոտած զարշահոտերը հականեխելու ունակութիւն, զանոնք լոյս-աշխարհ բերելու քանքարային խիզախութեամբ. Պարոնեանի բառերով՝ «... աչք ունենալ եւ իրաւանց հաւասարութիւն չտեսները կոչը ու միանգամայն գերի ըլլալ ըսել է»:

Անտարակոյս, Յակոբ Պարոնեանի նկարագիրին ներսը կը տիրէր երկնատուր սրամտութիւն՝ արեւմտահայ ու արեւելահայ աշխարհներու բազմաբղէտ ցաւերու, որոնք ունէին քանքարը գիտցուածին, ո'չ բանդազուշանքին, որովհետեւ այդ անունը ցաւերը, կսկիծները, երբեք

ենթակայ ենթադրութեանց: Մինաս Թէօլթօլեանի «Դար Մը Գրականութիւն» (Ա. հատոր) հատորի 192 էջատակին, մեծ երգիծաբանին ծննդեան թուականին կապակցութեամբ հեղինակը կը նշէ, թէ Հրանդ Ասատուր, Վահան Զարդարեան եւ հայր Մեսրոպ Ճանաշեան 1843 ցոյց տալով հանդերձ, Վրթանէս Փափագեան եւ Կարօ Սասունի 1842 ցոյց կուտան: Իսկ Երեւանի Պետ. հրատարակչականին ճիգերով եւ Մ. Մկրեան - Հ. Մելիքեան - Եդ. Թոփչեան խմբագրական մարմինի հաւաքական աշխատանքով հրատարակուած «Հայ Գրականութեան Պատմութիւն» երկհատոր գործը (Երեւան, 1951) ցոյց կու տայ 1841 թուական, որուն կը հակի նաեւ Թէօլթօլեան: Ջիյնալու համար ենթադրութեանց զառածուծներու մէջ՝ հետեւեցանք Հայաստանի Համայնագիտարանի աղբիւրին, որ յստակ ցոյց կու տայ Պարոնեանի ծննդեան ու մահուան թուականները:

Մեծ երգիծաբանին նուիրուած սոցն յօդուածը չ'ըլլար աւարտել առանց ներկայացնելու անոր կամիթներու շարքէն պատկերներ:

« « «

Սամսոնէն կը գրեն, թէ կին մը ամսոյս 15-ին բերած է զաւակ մը, որու կէսը՝ մարդ, միւս կէսը ձուկ է եղեր:

Կէսը կտրելով տապակելու եւ ուտելու էին:

Այս հրէշը ծնելէն քանի մը ժամ ետքը մեռած է:

Այս հրէշին ծնելուն վրայ չեմ զարմանար, բայց այնչափ վաղ մեռնելուն վրայ կը խորհիմ: Ինչո՞ւ: Անոր համար, որ ինչպէ՞ս կ'ապրի ուրեմն մեր ազգային երեափոխանական ժողովն, որուն մէկ քառորդը մարդ եւ երեք քառորդը թութակ է:

« « «

Աղջիկ, ինչո՞ւ համար նստեր, երկու ժամէ ի վեր կու լաս:

Ես չլամ, ո՞վ լայ...

Ինչ եղաւ:

Ի՞նչ պիտի ըլլայ, նոր ելած գլխարկներէն հատ մը առ ըսի հօրս՝ չ'առներ կոր:

Նոր ելած գլխարկ ըսածդ ի՞նչպէս բան է:

Վրան թռչուն կայ:

Աղէկ է, քանարիա մը ունինք, բռնէ՛, գլխարկիդ վրայ դիր, մննայ երթայ. բայց նայէ՛ որ չփախցունես... կ'ուզես նէ վանդակն ալ մէկտեղ դիր գլխուդ՝ որ չփախչի...

« « «

Ըսէ՛ ինծի, Եւան դրախտէն վնստուած ատեն ի՞նչ կը հագնէր: Բան մ'ալ չէր հագներ, տերեւ-

ներով ծածկուած էր ինք:

Անոր տերեւ չեն ըսեր:

Ի՞նչ կ'ըսեն:

Տեքովթէ կ'ըսեն...

« « «

Կնիկ, սա օղերըդ տո՛ւր:

Ի՞նչ պիտի ընես:

Ինչո՞ւ կը հարցնես:

Ինչո՞ւ չհարցնեմ. պիտի ծախեմ ու զքեզ հետս առնելով Հայաստան պիտի երթամ:

Ես սրկէ հոն չե՛մ երթար:

Հապա ամէն օր գլխուս միսը

կ'ուտէիր, որ Հայաստան երթանք:

Բայց չէի ըսեր, որ օղերս ծախենք ու այնպէս երթանք:

Ըսել է թէ օղերդ Հայաստանէն աւելի՞ կը սիրես:

Այդ ի՞նչ խօսք է, Հայաստանը կրնա՞մ ականջներէս կախել: Ըստ իս՝ ասանկ կիներու ականջները կտրելու է...

« « «

Ի՞նչ կը մտմտաս կոր, Մինաս աղա:

Ի՞նչ պիտի մտմտամ, զաւակ չունի՞ս, վիշտ ունիս:

Աղջիկդ երիտասարդի մը հե՛տ փախաւ, ի՞նչ ըրաւ:

Ո՛ւր էր թէ անանկ ըլլար:

Ի՞նչ եղաւ ուրեմն:

Առջի օր տախտակները սրբած ատեն ոտքը ցաւցուցեր է. երէկ խըրըխճիի մը տարի որ նայի. աս ալ շինեմ ըսելով աղջիկին ոտքը չկտրէ՞ մի:

Ոտքդ պագնեմ, սա խըրըխճին մեր տունը դրկէ, որ քիչ մըն ալ իմ կնոջս ոտքը նայի, որովհետեւ բնաւ տունը նստած չունի թշուառականը:

« « «

Դուք զաւառացիներդ անգ-գայ էք,- ըսաւ պոլսեցին:

Ինչո՞ւ:

Սիրտ չունիք:

Ո՞վ ըսաւ:

Վատ էք:

Ո՞ւր կարդացիք:

Քիւրտերը ձեր վրայ կը յարձակին եւ դուք տղու պէս կու լաք:

Պոլսեցին միշտ այդպէս կ'ըսէ՝ առանց պատճառները հարցունելու:

Շատ լաւ. ուրիշ կէտ մը կայ, ատոր ի՞նչ պիտի ըսես:


Ո՞ր կէտն է այն:

Ձեր կիներն ուրիշները կը յափշտակեն եւ դուք ձայն չէք հաներ:

Այդ կէտը Պոլսոյ մէջ զաւառներէն աւելի կայ, բարեկամ. դուն այդ կէտին քով վերջակէտ մը դիր եւ փակագծի մէջ գոցէ:

Պոլսեցին պէխերը կրծել սկսաւ:

«Աղթամար»-«Մաղիկ»



Նորվեկիան Յաղթեց Իտալիային Եւ Նուաճեց ԱԱ-2026-ի Ուղեգիր



Աշխարհի Բաժակի ընտրական մրցաշարի վերջին հանգրուանին Նորվեկիայի հաւաքականը Միլանի մէջ հիւրընկալուեցաւ Իտալիայի հաւաքականէն եւ հասաւ յաղթանակի 4:1 արդիւնքով։

Նորվեկիան I խումբի մէջ 24 կէտով գրաւեց առաջին տեղը եւ նուաճեց եզրափակիչ փուլի ուղեգիր։

Իտալիան 18 կէտով երկրորդն է եւ պայքարը կը շարունակի փլեյ-օֆֆի մէջ։

Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ուքրանիոյ Յաղթանակները

Ֆուլթուլի Աշխարհի Բաժակի եւրոպական գօտիի ընտրական մրցաշարի վերջին հանգրուանի հանդիպումները կը շարունակուին։

D խումբին մէջ եզրափակիչ փուլի ուղեգիր նուաճաց Ֆրանսան հիւրընկալուեցաւ Ատրպէյճանէն եւ յաղթեց 3:1 արդիւնքով։

Ուքրանիոյ հաւաքականը 2:0 արդիւնքով յաղթեց Իսլանտիային եւ գրաւեց երկրորդ տեղը՝ նուաճելով փլեյ-օֆֆի պայքարը շարունակելու իրաւունք։

K խումբին մէջ 8-րդ յաղթանակը արձանագրեց Անգլիոյ հաւաքականը՝ Ալպանիոյ դէմ խապին՝ 2:0։

Ալպանիան երկրորդն է եւ հանդէս կու գայ փլեյ-օֆֆի մէջ։

Խրուաթիան Նուաճեց ԱԱ-2026-ի Ուղեգիր

Խրուաթիան դարձաւ 2026թ. աշխարհի առաջնութեան ուղեգիր նուաճած 30-րդ հաւաքականը։

Ընտրական մրցաշարի նախավերջին հանգրուանին խրուաթները 3:1 արդիւնքով յաղթեցին Ֆարերեան Կղզիներու խումբին եւ L խումբին մէջ 7 խաղէն յետոյ 19 կէտով ապահովեցին առաջին տեղը։

Առաջին անգամ Ֆուլթուլի աշխարհի առաջնութեան կը մասնակցի 48 խումբեր։

Կազմակերպիչ երկիրներ ԱՄՆ-ի, Գանատայի եւ Մեքսիքոյի հաւաքականները առանց պայքարի ստացած են մասնակցութեան իրաւունք։

Անգլիոյ Հաւաքականը Կրկնեց ԱԱ-1954-ի Ընտրական Փուլում Հարաւսլաւիայի Նուաճումը



Անգլիոյ հաւաքականը, Աշխարհի Բաժակի ընտրական մրցաշարին արձանագրելով միայն յաղթանակներ եւ ոչ մէկ կոլ չձգելով իր բերդէն ներս, կրկնեց ԱԱ-1954-ի ընտրական փուլին Հարաւսլաւիայի նուաճումը։

Գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած խումբը երկու անգամ յաղթած է Ալպանիային (2:0, 2:0), Լատվիային (3:0, 5:0), Անդորրային (1:0, 2:0) եւ Սերպիային (5:0, 2:0)։

1954թ. աշխարհի առաջնութեան ընտրական փուլին Հարաւսլաւիան երկու յաղթանակ արձանագրած էր Յունաստանի (1:0, 1:0) եւ Իսրայէլի (1:0, 1:0) նկատմամբ։

Եղիշէ Մելիքեան. Նոր Սկսած Ենք Ծանապարիը, Երիտասարդ Խումբ Ենք

Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Եղիշէ Մելիքեանը Պորտուի մէջ տեղի ունեցած յետխաղային ասուլիսին մեկնաբանած է Փորթուկալիայէն կրած 1:9 արդիւնքով պարտութիւնը Աշխարհի Բաժակի ընտրական մրցաշարի վերջին հանգրուանին։

«Յաւալի պարտութիւն էր։ Մենք պէտք է հասկանանք, որ առայժմ պատրաստ չենք մրցակցել առաջատար խումբերու հետ։ Մենք ունինք ու կ'ունենանք մեր մրցակիցները, նոր սկսած ենք ճանապարհը, երիտասարդ խումբ ենք։ Կան ֆուտպոլիստներ, որոնք այս մակարդակի խաղալու համար պատրաստութիւն է պէտք։

Կը կարծեմ՝ նման խաղերը մեզ կու տան, կը դառնանք աւելի ուժեղ, աւելի փորձառու մեր ապագայի համար»,– նշեց Եղիշէ Մելիքեանը։

Հայաստանի հաւաքականը F խումբին մէջ 3 կէտով գրաւեց վերջին տեղը։ Փորթուկալը 13 կէտով առաջինն է եւ նուաճեց եզրափակիչի փուլի ուղեգիր։



Սերպիան Զրկուեցաւ ԱԱ-2026-ի Ուղեգիր Նուաճելու Հնարաւորութենէն, Ալպանիան Պիտի Խաղայ Փլեյ-օֆֆի Մէջ

Ֆուլթուլի Սերպիայի հաւաքականը աշխարհի առաջնութեան նախավերջին հանգրուանին Անգլիոյ դէմ 0:2 արդիւնքով պարտուելէ յետոյ զրկուեցաւ եզրափակիչ փուլի ուղեգիրի համար պայքարը շարունակելու հնարաւորութենէն։

K խումբին մէջ Սերպիան 10 կէտով երրորդն է։ 14 կէտով երկրորդ տեղը գրաւեց Ալպանիան, որը 1:0 արդիւնքով յաղթեց Անդորրային եւ փլեյ-օֆֆի մէջ կը պայքարի ուղեգիրի համար։

Այս խումբէն եզրափակիչ փուլ հասաւ 20:0 ընդհանուր արդիւնքով 7 յաղթանակ տարած Անգլիան։

«Պարսելոնան» Կը Ցանկայ «Քեմպ Նոու» Մարզադաշտի Սօս Տեղադրել Մեսիի Արձանը

«Պարսելոնան» կը ցանկայ «Քամպ Նոու» մարզադաշտի տարածքին տեղադրել աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի 38-ամեայ յարձակող, գատալոնական ակումբի նշանաւոր խաղցող Լիոնել Մեսիի («Ինտեր Մայամի») արձանը։

Այդ մասին յայտնած է «Պարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան։

«Կը կարծեմ՝ «Պարսելոնայի» բոլոր երկրպագուներն ալ կը ցանկան «Քամպ Նոուի» տարածքին տեսնել Լիոնել Մեսիի արձանը։ Մենք կ'աշխատինք այդ նախագծի վրայ։ Եթէ Մեսին ու անոր ընտանիքը կը ցանկան քննարկել այդ հարցը, կարող ենք ներկայացնել նախագիծը։

Լէոյին պատիւ կը վերապահուի վերաբացել վերակառուցուած «Քամպ Նոուն»։ Ուրախ կ'ըլլանք անոր տեսնել այդ իրադարձութեան ժամանակ»,– Լապորտայի խօսքը կը մէջբերէ Goal.com-ը։

Մեսին «Պարսելոնայ»ի կացմէն ներս խաղցած է 21 տարի, նուաճած 35 տիտղոս։



ԱԱ-2026. 48 Մասնակիցներէն 32-ը Յայտնի Են

2026թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչ փուլի 31-րդ եւ 32-րդ ուղեգրերը նուաճեցին Փորթուկալի եւ Նորվեկիայի հաւաքականները։

Առաջնութեան կազմակերպիչ երկիրներ ԱՄՆ-ի, Գանատայի եւ Մեքսիքոյի հաւաքականներէն բացի արդէն մասնակցութեան իրաւունք ունին նաեւ Ճաբոնը, Հարաւային Քորեան, Նոր Զելանտան, Աւստրալիան, Իրանը, Ուզպեքիստանը, Յորդանանը, Սէուտական Արաբիան, Քաթարը, Արժանթինը, Պրագիլը, Էքուատորը, Ուրուկուէյը, Գոլոմպիան, Փարակուէյը, Մորոքոն, Թունիզը, Եգիպտոսը, Ալժիրը, Կանան, Կաբօ Վերտեն, Հարաւաֆրիկեան Հանրապետութիւնը, Սենեկալը, Կոտ Դ'իվուարը, Անգլիան, Ֆրանսան եւ Խորուաթիան։

Առաջին անգամ առաջնութեան կը մասնակցի 48 հաւաքական։ Կը մնայ վիճարկել 16 ուղեգիր։

Եզրափակիչ հանգրուանին Հարաւսլաւիան հասած էր քառորդ եզրափակիչ եւ 0:2 արդիւնքով պարտուած ապագայ ախոյեան Արեւմտեան Գերմանիոյ դէմ։